

**Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների
պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի՝ Հայաստանի
Հանրապետության կողմից կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության
հինգերորդ պարբերական ազգային զեկույց**

Ներածություն

1. Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ Շրջանակային կոնվենցիա) 25-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է նշված կոնվենցիայի կատարման վերաբերյալ հինգերորդ պարբերական զեկույցը (այսուհետ՝ Զեկույց):

2. Զեկույցը ներառում է տեղեկատվություն կոնվենցիայի դրույթների կատարման ուղղությամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (97) 10 բանաձևի 21-րդ կետի:

3. Զեկույցի պատրաստման նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որում ընդգրկված են հետևյալ գերատեսչությունների ներկայացուցիչները.

- 1) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն (զեկույցի համակարգող)
- 2) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ
- 3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
- 4) Հայաստանի Հանրապետության կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- 5) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- 6) Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
- 7) Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով
- 8) Երևանի քաղաքապետարան
- 9) Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ
- 10) Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդ:

4. 2019 թ. հուլիսի 4-ին ՀՀ ԱԳՆ-ում տեղի ունեցավ Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիային համաձայն ներկայացվող Հայաստանի հինգերորդ զեկույցի քննարկումը՝ ՀՀ ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդում ներկայացված 11 ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ¹: Ողջույնի խոսքով հանդես եկավ ԱԳՆ Մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության պետ Կարինե Սուջայանը: Իր խոսքում նա անդրադարձավ ազգային փոքրամասնությունների իրավունքների

¹ <https://www.mfa.am/hy/press-releases/2019/07/04/co/9704>

ապահովմանն ուղղված Հայաստանի կողմից իրականացվող այն քայլերին, որոնք բխում են մարդու իրավունքներին վերաբերող միջազգային, այդ թվում՝ փոքրամասնություններին առնչվող հատուկ նշանակության փաստաթղթերից: Քննարկմանը մասնակցում էր նաև Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին ԵԽ շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի՝ Հայաստանի փորձագետ Արայիկ Նավոյանը, ով ներկայացրեց Կոմիտեի աշխատանքը պետությունների կողմից զեկույցների պատրաստման և դրանց հետագա կիրարկման ուղղությամբ: Հանդիպման ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչն անդրադարձավ Ազգային փոքրամասնությունների մասին ՀՀ օրենքի նախագծի մշակման հարցերին, ինչից հետո մանրամասն քննարկվեց զեկույցի նախագիծը և բանախոսները պատասխանեցին բարձրացված հարցերին: ԱԳՆ-ում կազմակերպված բաց քննարկման ընթացքում բարձրաձայնաձ խնդիրները ի հայտ բերեցին օրենքի նախագծի հավելյալ քննարկման անհրաժեշտությունը:

5. Զեկույցը մշակվել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված ձևաչափին համապատասխան ACFC/III(2013)001՝ Նախարարների կոմիտեի կողմից ընդունված բանաձևի կատարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ (Բաժին 1) և Շրջանակային կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ (Բաժին 2):

Բաժին 1

Նախարարների կոմիտեի կողմից ընդունված **CM/ResCMN(2018)5** բանաձևի (1315-րդ հանդիպում, 02.05.2018թ.) կատարմանն ուղղված միջոցառումներ

- «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքը և ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների վրա ազդեցություն ունեցող այլ օրենսդրություն մշակելիս, լայնածավալ խորհրդակցություններ անցկացնել քաղաքացիական հասարակության և ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ, ապահովել այդ օրենսդրության՝ միջազգային չափանիշներին լիակատար համապատասխանությունը;

և

- Ցուցաբերել նախաձեռնողական մոտեցում՝ Շրջանակային կոնվենցիայի դրույթներին համապատասխան փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը խթանելու համար, ապահովել, որպեսզի Շրջանակային կոնվենցիայի դրույթներով սահմանված իրավունքներից օգտվելունն առնչվող քաղաքականությունը մշակվի փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցության արդյունքում՝ նրանց իրական կարիքներն արտացոլելու նպատակով:

6. Հիմք ընդունելով «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշման հավելված 1-ի 82-րդ կետը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը ձեռնամուխ է եղել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրենց ազգային և էթնիկ ինքնության, ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման և զարգացման իրավունքի իրականացումը կարգավորող օրենքի մշակման աշխատանքներին: Այս համատեքստում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթը: Փաթեթը քննարկվել է շահագրգիռ պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների

հետ, ինչպես նաև հանրային քննարկումներն ապահովելու նպատակով տեղադրվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքում (2018 թվականի փետրվարի 23-ից մինչև 2018 թվականի մարտի 11-ը): Օրենքի նախագծի շուրջ տեղի են ունեցել նաև մասնագիտական քննարկումներ, մասնավորապես, 2018 թվականի հունիսի 27-ին Եվրոպայի Խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության հարցերով Եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ (ECRI) կողմից՝ ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում²: Քննարկումներ են անցկացվել նաև հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ: Մասնավորապես, 2019 թվականի ապրիլի 16-ին Եվրասիա համագործակցության հիմնադրամի կողմից կազմակերպվել էր քննարկում «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:³ 2019 թ. հունիսի 13-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինը կազմակերպել է վերը նշված օրենքի քննարկում Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի անդամների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունները ներկայացնող այլ կազմակերպությունների ղեկավարների հետ: Այնուհետև, հանդիպման ընթացքում ըստ էության, ուշադրության արժանի առաջարկությունները առարկայական քննարկելու նպատակով հունիսի 19-ին կազմակերպվել է հանդիպում ՀՀ վարչապետի նստավայրում:

7. Հիմք ընդունելով ԵԽ փորձագիտական եզրակացության առաջարկությունները՝ նախագիծը լրամշակվել է և կրկին ներկայացվել հանրային քննարկման www.e-draft.am կայքում (2019թ. հուլիսի 15-ից 30-ը): Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ այժմ մշակման փուլում գտնվող Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրերի նախագծերի հանրային քննարկումների ընթացքում բարձրացվել են մի շարք հարցեր, որոնք ի հայտ են բերել նախագծի հավելյալ քննարկման անհրաժեշտությունը: Այսպիսով, նախագիծն այժմ գտնվում է լրամշակման փուլում՝ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և այլ շահագրգիռ կողմերի հետ ակտիվ համագործակցության և հանրային քննարկումների միջոցով:

8. Շրջանակային կոնվենցիայի վերաբերյալ Հայաստանի երկրորդ, երրորդ և չորրորդ ազգային զեկույցները (2-րդն ու 3-րդը թարգմանվել են ռուսերեն), ինչպես նաև Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ բանաձևն ու խորհրդատվական կոմիտեի 2017թ. զեկույցը տեղադրվել են ՀՀ կառավարության կայքում, որին պարտադիր հղումներ են կատարում ՀՀ մարզպետարանների կայքերը: «Դրանք տարածելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարության (ներկայումս՝ վարչապետի) աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի աշխատակիցներն այցելել են ազգային փոքրամասնությունների բնակավայրեր, հանդիպել են Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, համայնքապետերի, դպրոցների տնօրենների հետ և, անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային կրիչի վրա նրանց են տրամադրվել Շրջանակային կոնվենցիայի

² <http://www.moj.am/article/2058>

³ <http://www.moj.am/article/1944>

(ինչպես նաև ոլորտին վերաբերող այլ միջազգային պայմանագրերի) և դրա հետ կապված բոլոր փաստաթղթերի տարբերակները»:

- Կրկնապատկել ջանքերը եզրի երեխաների՝ հատկապես աղջիկների առջև ծառայած՝ կրթության հասանելիության հետ կապված դժվարություններն անհապաղ վերացնելու համար, շարունակել բոլոր երեխաների համար նախադպրոցական կրթության ապահովմանն ուղղված ջանքերը, վերանայել օրենսդրությունը մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան՝ առանց ամուսինների գիտակցված համաձայնության, ճնշում կամ բռնություն գործադրելու միջոցով կնքված հարկադիր ամուսնությունները քրեականացնելու նպատակով:

9. ՀՀ մարզերում հասարակական կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվել են ազգությամբ եզրի աշակերտների, մասնավորապես, եզրի աղջիկների կրթության՝ հանրակրթությունից դուրս մնալու խնդիրների վերաբերյալ սեմինարներ և քննարկումներ:

10. «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը Հայաստանում ԱՄՆ և Կանադայի դեսպանությունների ֆինանսավորմամբ 2018-2019 թվականներին իրականացրեց «Եզրի կանանց/աղջիկների կրթության իրավունքի խթանում» և «Եզրի աղջիկների և կանանց կրթության իրավունքի պաշտպանությունն Արմավիրի և Արագածոտնի մարզերում բնակչության իրազեկության բարձրացման և ուսուցիչների կարողությունների զարգացման միջոցով» ծրագրերը, որոնց նպատակն էր նպաստել եզրի կանանց և աղջիկների կրթության իրավունքի իրականացմանը, ուժեղացնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը:

11. Հայաստանի Հանրապետության բնակիչ և ՀՀ քաղաքացի հանդիսացող ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչները, բնականաբար, թե՛ որպես անհատներ, թե՛ որպես էթնիկ համայնքներ, ազգային փոքրամասնությունների իրավունքի կրող են: Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինը շարունակ հանդիպումներ է անցկացրել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, համայնքների և հասարակական կազմակերպությունների հետ՝ քննարկել նրանց իրավիճակի, հուզող խնդիրների, իրավունքների իրացման հետ կապված հարցերը: ՀՀ մշակույթի, ՀՀ կրթության և գիտության և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները իրենց կողմից նախատեսված ծրագրերում մշտապես ներգրավել են ազգային փոքրամասնություններին՝ վերջիններիս հետ կապված խնդիրները լուծելիս խորհրդակցելով նրանց հետ:

12. 2015-2018 թվականների ընթացքում ՀՀ Նախագահի աշխատակազմի միջնորդությամբ մարզպետարանները առաջնային ֆինանսական օժանդակություն են տրամադրել պետականություն չունեցող ազգային համայնքներին, ինչպես նաև աջակցել են ազգային փոքրամասնությունների կողմից առաջադրված ազգային-մշակութային և այլ տեսակի խնդիրների լուծման հարցում:

- Խորհրդակցել ազգային փոքրամասնությունների տեղական ներկայացուցիչների հետ՝ գնահատելու համար վարչական մարմինների հետ շփումներում, ինչպես նաև մեծ թվով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակեցված աշխարհագրական տարածքներում,

տեղագրական նշանները փոքրամասնությունների լեզուներով օգտագործելու անհրաժեշտությունը: Իրականացնել իրազեկության բարձրացմանն ուղղված արշավ՝ խրախուսելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուների օգտագործումը:

13. Սահմանադրական փոփոխությունների արդյունքում՝ կիսանախագահական համակարգից խորհրդարականի անցման հետևանքով՝ 2018 թ. ապրիլից ՀՀ Նախագահի լիազորությունների սահմանափակման հետևանքով Խորհուրդը, որպես ՀՀ Նախագահի աշխատակազմին առընթեր մարմին, իրավական առումով իր գործունեությունը դադարեցրեց, սակայն փաստացի ՀՀ Նախագահի աշխատակազմին առընթեր ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհուրդի համակարգումը շարունակեց իրականացնել ՀՀ վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի բաժինը, ուր տեղափոխվել էր նաև Խորհրդի նախկին համակարգողը:

14. 2019թ. մայիսի 3-ին ուժի մեջ է մտել ՀՀ վարչապետի որոշումը՝ Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդ ստեղծելու և Խորհրդի կազմը հաստատելու մասին: Այդ որոշման համաձայն, նոր Խորհուրդը գործում է Վարչապետի գլխավոր խորհրդականին առընթեր, իսկ Խորհրդի գործունեության կազմակերպչական տեխնիկական ապահովումն իրականացնում է վարչապետի աշխատակազմը՝ համապատասխան ստորաբաժանման միջոցով: Նույն որոշմամբ հաստատվել է նաև Խորհրդի անդամների կազմը: Խորհրդի կազմը, անդամների ընտրության կարգը, գործառույթներն ու նպատակները մնացել են անփոփոխ (պահպանելով ՀՀ Նախագահի աշխատակազմին առընթեր ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհրդի գործելաճը): Խորհրդի անդամնիկ նիստում (17.05.2019թ.) հաստատվեց Խորհրդի աշխատակարգն ու պետական բյուջեով ազգային փոքրամասնություններին հատկացված 20 մլն. դրամի բաշխման եղանակը: Խորհրդի արտահերթ նիստում (22.05.2019թ.) հաստատվեցին ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների կողմից ներկայացված ծրագրերն ու դրանց ֆինանսավորման առաջարկված չափերը:

15. 2006թ. ՀՀ Կառավարությունը իրականացրեց ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների Խորհրդի գաղափարը. Երևան քաղաքի կենտրոնում (Սարյան 22 հասցեի 14,15-րդ հարկեր) ՀՀ ազգային փոքրամասնությունների համար բացվեց Ազգությունների Մշակույթի Կենտրոն, որը ՀՀ Նախագահի անմիջական միջամտությամբ կահավորվեց, համալրվեց տեխնիկական սարքավորումներով և սկսեց իր գործունեությունը: 2017թ. վերջին ազգային փոքրամասնությունների համար նախատեսված տարածքից, այն է՝ 14-րդ հարկի մեծ մասը, տրվեց ՀՀ կառավարության աշխատակազմի բարեգործական ծրագրերի վարչությանը, ինչը մեծ անհարմարություններ ստեղծեց ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների բնականոն աշխատանքների կազմակերպման հարցում: Միաժամանակ, պետք է նշել, որ վերջին տարվա ընթացքում վերանորոգվել են դասասենյակներն ու ընդհանուր միջանցքը, ինչպես նաև ավելացել է կենտրոնում իրականացվող տարաբնույթ մշակութային միջոցառումների թիվը:

16. 2019թ. մայիսի 17-ին հրավիրված Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի առաջին նիստում ընթացիկ հարցերի շրջանակում բարձրացված հարցերից էր ներկայում

գործող Ազգային փոքրամասնությունների կրթամշակութային կենտրոնի անհարմարությունը, օգտագործվող տարածքի կրճատումը, տեխնիկական սարքավորումների մաշվածությունը: Այդ խնդրի լուծման համար Խորհրդի անդամների կողմից առաջարկվեց առանձին շենքի տրամադրման տարբերակը, որը կկոչվի պայմանականորեն Ազգությունների տուն և կծառայի բոլոր ազգային փոքրամասնություններին: Առաջարկին ընթացք տալու նպատակով՝ կազմվել է նամակ Խորհրդի բոլոր անդամների ստորագրություններով, որը հասցեագրվել է վարչապետի գլխավոր խորհրդականին՝ համապատասխան քայլեր ձեռնարկելու համար:

17. Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինը հետևողականորեն աշխատում է հասարակության տարբեր շերտերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ: Պարբերաբար հանդիպումներ են տեղի ունենում Հայաստանի Հանրապետության տարբեր գերատեսչությունների ղեկավարների, նախարարների հետ, ինչպես նաև մամուլի ասուլիսներ տարբեր ակումբներում: Բազմաթիվ լրատվամիջոցներ շահագրգռվածություն են ցուցաբերում ազգային փոքրամասնությունների խնդիրները և մշակութային կյանքը լուսաբանելու հարցում: Դրանցից են «Առավոտ», «Ազգ», «Երկիր», «Հետք», «Լրագիր», «Հայոց աշխարհ» և այլ տպագիր և ինտերնետային թերթերը:

18. «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում են հետևյալ կարգավորումները.

- Այն համայնքներում, որտեղ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք կազմում են բնակչության առնվազն երեսուն տոկոսը, որպես տեղական ինքնակառավարման մարմինների հետ բանավոր հաղորդակցվելու լեզու կարող է օգտագործվել նաև ազգային փոքրամասնության լեզուն: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ընդհանուր թիվը և համամասնությունը տվյալ համայնքում որոշվում են՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հերթական մարդահամարի տվյալների հիման վրա:

- Այն համայնքներում, որտեղ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք կազմում են ընդհանուր բնակչության առնվազն երեսուն տոկոսը, համայնքների և փողոցների անվանումները, ինչպես նաև պետական և համայնքային հաստատությունների՝ այդ թվում համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի ցուցատախտակների գրառումները հայերենի հետ զուգահեռ նշվում են նաև ազգային փոքրամասնության լեզվով:

Տես նաև նախորդ ազգային զեկույցի 28-36 կետերը և սույն զեկույցի 16-րդ հոդվածի պատասխանները:

- ապահովել, որ հետագա մարդահամարների, ինչպես նաև այլ ձեռնարկներով տվյալների հավաքագրման համար կիրառվեն համապատասխան ընթացակարգեր՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավիճակի վերաբերյալ հավաստի տվյալներ տրամադրելու նպատակով: Ապահովել մեկից ավելի էթնիկ պատկանելություն նշելու հնարավորություն՝ կիրառելի միջազգային չափանիշներին համապատասխան:

և

- Հնարավորություն ստեղծել՝ միջազգային կիրառելի չափանիշներին համապատասխան, հայտարարելու բազմակի էթնիկ ծագման մասին:

19. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն տրամադրել է 2011 թ. մարդահամարի արդյունքների վրա հիմնված Հայաստանի Հանրապետության բնակչության կազմը՝ ըստ ազգությունների, քաղաքային/գյուղական բաշխումով, որը ներկայացված է սույն որոշման Հավելված 3-ում: Հավելված 1-2ը ներկայացնում են նաև 2016-2018թթ. ժամանակահատվածում միգրացիոն տեղաշարժերի պատկերը և 2014-2018թթ. կենդանի ծնվածների ու մահացածների բաշխումը՝ ըստ ազգային պատկանելության:

20. ՀՀ կառավարության 2018թ. հոկտեմբերի 10-ի N 1115-Ն որոշման համաձայն, հերթական մարդահամարը ՀՀ-ում կանցկացվի 2020թ. հոկտեմբերի 18-27-ը, իսկ փորձնական մարդահամարը՝ 2019թ. հոկտեմբերի 3-12-ը, երկրի բնակչության մեկ տոկոսն ընդգրկող՝ մեկ քաղաքային և 4 գյուղական բնակավայրերում (Շիրակի և Կոտայքի մարզեր): Ընդ որում, առաջին անգամ ՀՀ-ում մարդահամարը կանցկացվի բնակչության պետական ռեգիստրի տվյալների կիրառությամբ, իսկ լրացուցիչ բնութագրիչների մասին տվյալները կհավաքագրվեն՝ 25 տոկոս ընտրանքային հարցումներով:

- խրախուսել փոքրամասնությունների տարբեր խմբերի միջև դրական հարաբերությունները, ստեղծել ու խթանել եզդի և քուրդ փոքրամասնությունների միջև երկխոսության հնարավորություններ:

21. Եզդի և քուրդ փոքրամասնությունների ներկայացուցիչները մշտապես հաղորդակցվում են իրենց ազգային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի նիստերին: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ 2018թ. օգոստոսին ՀՀ վարչապետի աշխատակազմ է դիմել նորաստեղծ «Պատմական Աղվանքի ուղի ժողովրդի վերածնունդ» ՀԿ նախագահը՝ կազմակերպության ճանաչողական բնույթի միջոցառման կազմակերպմանը աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև Հայաստանում բնակվող ուղիներին ազգային փոքրամասնության կարգավիճակ տալու առաջարկով: Դիմումը ուղղվել է համապատասխան գերատեսչություններին, ինչի արդյունքում ՀՀ Մշակույթի նախարարության կողմից կազմակերպությանը տրամադրվել է ֆինանսական օժանդակություն՝ միջոցառումը պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Միջոցառումը, որին հրավիրվել և մասնակցել են նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, կայացել է նույն թվականի աշնանը Բագրատաշենում, ուր որոշակի քանակությամբ ուղիներ են բնակվում:

- խորհրդակցելով Մարդու իրավունքների պաշտպանի հետ՝ ապահովել, որպեսզի վերջինս ունենա անհրաժեշտ բոլոր ռեսուրսները իրականացնելու համար «Իրավահասարակության ապահովման մասին» օրենքի շրջանակներում իրեն վերապահվող նոր գործառույթներն ու լիազորությունները:

22. Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների առնչվող կարգավորումները ներկայումս գտնվում են լրամշակման փուլում մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համատեղ:

- նպաստել քրեական օրենսդրության վերանայմանը՝ ռասայական և այլ հիմքերով ատելության շարժառիթները բոլոր հանցագործությունների համար ծանրացուցիչ հանգամանք դարձնելու նպատակով, ընդունել համակարգչի միջոցով ռասիստական կամ քսենոֆոբ բնույթի նյութեր տարածելը կամ այլ ճանապարհով դրանք հասանելի դարձնելը և համացանցում ատելություն սերմանող արարքները քրեականացնող օրենսդրական դրույթներ, իրականացնել ատելություն սերմանող հանցագործության տարբեր ձևերի մասին բնակչության իրազեկման և տեղեկացվածության բարձրացման արշավներ և ստեղծել մատչելի մեխանիզմներ՝ ատելություն սերմանող հանցագործության մասին հայտնելու համար:

23. ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներից է նաև հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը: Այսինքն՝ ցանկացած հանցագործություն, որը կատարվել է վերը նշված շարժառիթով արդեն իսկ հանգեցնելու է հանցագործության համար նախատեսված առավելագույն սանկցիային մոտ պատժի: Սակայն կան հանցագործություններ, որտեղ այս հանգամանքը նախատեսված է նաև որպես ծանրացուցիչ հանգամանքներ: Դրանցից են՝ սպանությունը /ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված/, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը /112-րդ հոդված/, դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը /113-րդ հոդված/, ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը /119-րդ հոդված/, գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը /185-րդ հոդված/, դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը /265-րդ հոդված/:

Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված են հատուկ հոդվածներ, որոնք պատասխանատվություն են նախատեսում՝ ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելու համար /226-րդ հոդված/, ցեղասպանության /393-րդ հոդված/ և ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելու, մեղմացնելու, դրանց հավանություն տալու կամ արդարացնելու համար /հոդված 397.1/:

Ավելին, ներկայումս մշակման փուլում են գտնվում ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի նախագծերը: Վերջինների շրջանակում քննարկման առարկա են հանդիսանում նաև ատելություն սերմանող, ռասայական խտրականություն քարոզող իրավակարգավորումների մշակմանն առնչվող հարցերը: Ակնկալվում է ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերը ընդունել 2020թ.:

- ապահովել, որ ազգային փոքրամասնությունների մշակույթը և պատմությունը ներկայացվի և ուսուցանվի բոլոր դպրոցներում պատշաճ մակարդակով, այդ թվում՝ այն դպրոցներում, որտեղ հաճախում են մեծաթիվ ազգային փոքրամասնությունների խմբերին պատկանող երեխաներ, և որ դրանք արտացոլեն ազգային փոքրամասնությունների մշակույթների բոլոր ոլորտները՝ որպես հայ հասարակության անբաժանելի մաս:

24. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ «Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության մշակութային կյանքին մասնակցելն ու մշակութային գործունեություն իրականացնելը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից»:

25. «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում են հետևյալ կարգավորումները.

- Նախադպրոցական դաստիարակությունը և հանրակրթական հաստատություններում ուսուցումը ազգային փոքրամասնությանը պատկանող երեխաների համար կարող է կազմակերպվել նրանց մայրենի լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ, կամ ազգային փոքրամասնությանը պատկանող երեխաների համար կարող են կազմակերպվել նրանց մայրենի լեզուն, մշակույթը և պատմությունը ուսուցանող լրացուցիչ

կրթադաստիարակչական խմբեր՝ կրթության բնագավառում Կառավարության լիազորած մարմնի հաստատած ծրագրին համապատասխան:

- Հայաստանի Հանրապետությունը միջոցներ է հատկացնում ազգային պետություն չունեցող ազգային փոքրամասնությունների լեզուն և մշակույթը ուսուցանող դպրոցական ծրագրերի մշակման, դասագրքերի և այլ նյութերի հրատարակության համար:

- ապահովել հանրային ուղիով կողմից ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների շարունակական պատրաստումն ու տարածումը՝ Շրջանակային կոնվենցիայի համապատասխան դրույթների համաձայն: Ընձեռել փոքրամասնությունների լեզուներով ուղիով հեռուստատեսային և հեռուստահեռարձակման հնարավորություն, ինչպես նաև դիտարկել փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների ծրագրավորումը որպես չափանիշ ուղիով հեռուստատեսային և հեռուստատեսային ալիքների մասնավոր ընկերություններին տրամադրման ժամանակ:

26. «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծով առաջարկվում են հետևյալ կարգավորումները.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կարող են հիմնվել ազգային փոքրամասնությունների լեզվով զանգվածային լրատվության միջոցներ, ինչպես նաև հեռարձակվել հեռուստատեսային և ուղիով հաղորդումներ, հրատարակվել հանդեսներ, ամսագրեր:

- Հանրային հեռուստատեսությամբ և հանրային ուղիով հեռարձակվում են Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակույթը ներկայացնող ծրագրեր կամ հաղորդումներ:

- Հանրային հեռուստատեսությամբ և հանրային ուղիով ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների հեռարձակման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Հայաստանի Հանրապետությունում հեռուստաուղիով ծրագրերի հեռարձակման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հեռուստատեսության և ուղիով մասին» ՀՀ օրենքով:

27. Հայաստանի Հանրապետությունում հեռուստաուղիով ծրագրերի հեռարձակումն իրականացվում է լիցենզիայի հիման վրա: Հանրային ուղիով ընկերությունը և Հանրային հեռուստաընկերությունը շարունակում են հեռաձևել ազգային փոքրամասնություններին նվիրված հաղորդումներ, հատուկ ծրագրեր և փոքրամասնությունների լեզուներով տեղեկատվություն:

Մասնավորապես.

Հանրային ուղիով ընկերությունը պատրաստում է հաղորդումներ ՀՀ ազգային փոքրամասնություններին նվիրված և նրանց լեզուներով, որոնք ներկայացված են ստորև.

- Գերկարձ ալիքների AM տիրույթում հեռարձակվող «Առաջին ծրագրի» եթերում հնչում են «Երևանի ձայն» ամենօրյա ուղիով հաղորդումները 4 լեզուներով՝ եզդիերեն - 60 րոպե, քրդերեն - 30 րոպե, ասորերեն - 15 րոպե և հունարեն - 15 րոպե,

- Գերկարձ ալիքների տիրույթում հեռարձակվող «Առաջին ծրագրի» եթերում աշխատանքային օրերին հաղորդվում է առօրյա լրատվությամբ ռուսերեն լեզվով,

- Շաբաթական մեկ անգամ թողարկվում է ազգային փոքրամասնությունների

վերաբերյալ հաղորդում 20 թույն տևողությամբ ռուսերեն լեզվով «Հայասանը մեր տունն է» խորագրով,

-Ընկերության կայքում առկա են եզրիներեն, քրդերեն, ասորերեն, հունարեն կայքէջերը, ուր տեղադրված են նաև այդ լեզուներով հաղորդումների ծայնագրություններ: Ընթացիկ լրահոսն առկա է ռուսերեն և վրացերեն լեզուներով կայքէջերում, համապատասխան ծայնագրություններով:

28. Հանրային հեռուստաընկերության եթերում 2018 թվականի սեպտեմբերի 3-ից հեռարձակվում է 35-40 թույն տևողությամբ ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքի մասին պատմող «Կողք կողքի» հաղորդաշարը: Հաղորդումը եթեր է հեռարձակվում յուրաքանչյուր հինգշաբթի 19:35-ին, իսկ սույն հաղորդման կրկնությունը՝ յուրաքանչյուր ուրբաթ՝ 15:25-ին: Լրատվական ծառայության կողմից ևս վերջին մեկ տարում ներկայացվել են 40-ից ավելի նյութեր և ռեպորտաժներ ազգային փոքրամասնություններին վերաբերող իրադարձությունների մասին:

2018թ.

1. Ազգային փոքրամասնություններ-----2018.07.25
2. Եզրիներ-----2018.01.11
3. ԱԺ եզրիներ -----2018.01.17
4. ԱԺ եզրիների ցեղասպանություն -----2018.01.17
5. Քրդերի ցույց -----2018.02.02
6. ՄԱԿ քրդերի ցույց ԱՖրիկն -----2018.02.02
7. Եզրիների գերեզման ----- 2018.03.06
8. Եզրիների նոր տարի -----2018.04.18
9. Եզրիների հոգևոր առաջնորդ -----2018.05.18
10. ԸՕ փոքրամասնություն -----2018.07.02
11. Եզրիների ջարդերի տարելից -----2018.08.01
12. Եզրիների ցեղասպանություն -----2018.08.03
13. Ֆերիք գյուղ-եզրիների դպրոց -----2018.09.06
14. Ազգային փոքրամասնություններ -----2018.10.21
15. Նախընտրական-եզրիներ -----2018.11.12
16. Եզրիների տոն -----2018.12.21
17. Ամանոր ազգային փոքրամասնություններ -----2018.12.29
18. Եզրիներ համար

2019թ.

1. Քուրդ կանանց համաժողով-----2019/02/15
2. ԵզրիներիԽըրթԼավի-Շամիրամ գյուղ -----2019/02/22
3. Քրդական համայնքի ցույց-----2019/03/03
4. Հինդի միջազգային օր -----2019/03/26
5. Քրդական համայնք Օջալան բողոքի ակցիա 2019/03/02
6. Քրդեր Նովրուզ-----2019/03/22
7. Ասորիների տոն -----2019/04/01
8. Ասորիների նոր տարի-----2019/04/01
9. Եզրիները՝ ապրիլյան պատերազմում-----2019/04/03

10. Եզդիների նոր տարի -----2019/04/17
11. Մարտական պարզևներ եզդիներին -----2019/05/15
12. Մարտական պարզևներ եզդիներին-----2019/05/15
13. Եզդի երեխայի շարունակություն -----2019/06/12
14. Եզդիների ցեղասպանություն -----2019/08/02
15. Ասորիների ցեղասպանություն -----2019/08/07
16. Եզդիներ -----2019/08/19
17. Եզդիների տաճար -----2019/09/30
18. Եզդի երեխաներ-----2019/04/29

➤ ապահովել Ընտրական օրենսգրքի ազգային փոքրամասնություններին առնչվող հոդվածների արդյունավետ իրականացումը : Ազգային փոքրամասնությունների մասին նոր օրենքով երաշխավորել անհրաժեշտ պայմաններ՝ ապահովելու հասարակական գործերում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ ներկայացվածությունը:

29. Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի համաձայն՝ ազգային փոքրամասնությունների ներկայացվածությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ապահովվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք սահմանադրական օրենքով սահմանված կարգով և համամասնությամբ:

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ին ընդունված ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ համապետական ընտրական ցուցակը կարող է ունենալ երկրորդ մաս, որում, սույն հոդվածի 6-րդ մասին համապատասխան, կարող են ընդգրկվել ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Համապետական ընտրական ցուցակի երկրորդ մասում ընդգրկված ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորի թեկնածուն կարող է ընդգրկվել նաև համապետական ընտրական ցուցակի առաջին մասում:

Մանդատների՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին տրամադրման կարգը նկարագրված է օրենսգրքի 95-րդ հոդվածի 9-րդ մասում: Այսպիսով, 2018 թ. դեկտեմբերի 9-ին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում յոթերորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների կազմում են չորս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ եզդիներ, ռուսներ, ասորիներ և քրդեր:

ՀՀ մարզերի մի շարք համայնքների, մասնավորապես, Դիմիտրով, Վերին Դվին, Արզնի, Ալագյազ, Ֆիդլետովո, Կանչ, Հակո, Սորիկ, Թլիկ, Մեծածոր, Շամիրամ, Արևուտ, Դդմասար, Օթևան համայնքների ղեկավարներ են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Բաժին 2

Շրջանակային կոնվենցիայի կատարմանն ուղղված միջոցառումներ

հողված առ հողված

Հողված 1

Ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մասն է և, որպես այդպիսին, հանդիսանում է միջազգային համագործակցության բնագավառ:

30. Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն համագործակցում է Եվրոպայի Խորհրդի ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող և մոնիտորինգ իրականացնող մարմինների հետ, այդ թվում՝ «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական կոմիտեի (ECRI), «Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների մասին» եվրոպական խարտիայի փորձագետների կոմիտեի հետ:

31. ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը: Նախագիծը 2018 թվականի հունվարին ուղարկվել է ԵԽ Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինություն՝ փորձագիտական եզրակացության համար: 2018թ. ապրիլի 18-ին ընդունվել է համապատասխան եզրակացությունը, որում նշվում է, որ Օրենքի նախագիծը ներառում է բազմաթիվ ոլորտներ, որոնք, Եվրոպայի Խորհրդի կարծիքով, կարևոր են ազգային փոքրամասնությունների և նրանց լեզուների պահպանման ու խթանման համար՝ մասնավորապես Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի և Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի շրջանակներում:

Հողված 2

Սույն Շրջանակային կոնվենցիայի դրույթները պետք է կիրառվեն բարեխիղճ կերպով, ըմբռնման և հանդուրժողականության ոգով և բարիդրացիության, պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության սկզբունքներին համապատասխան:

32. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանում ծավալուն միջոցառումներ են իրականացվել մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված մեխանիզմները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ, վավերացվել են մարդու իրավունքների ոլորտի միջազգային պայմանագրեր և միջոցներ են ձեռնարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բարեփոխելու ուղղությամբ:

33. Հայաստանի Հանրապետությունը 2018թ. ստորագրել է Եվրոպայի Խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան» (Ստամբուլի կոնվենցիա): ՀՀ արդարադատության

նախարարությունը նախաձեռնել է վերջինիս վավերացման գործընթացը՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համահունչ: ՀՀ արդարադատության նախարարը 2019թ. հուլիսի 26-ին դիմել է Եվրոպայի Խորհրդի Վենետիկի հանձնաժողով՝ ստանալու Հանձնաժողովի պաշտոնական կարծիքը ՀՀ Սահմանադրության տեսանկյունից Կոնվենցիայի վավերացման ազդեցության վերաբերյալ: Վենետիկի հանձնաժողովի կարծիքը ստանալուց հետո, ՀՀ Կառավարությունը Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն դիմելու է Սահմանադրական դատարան՝ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով: Այնուհետև, ներպետական գործընթացներն ապահովելուց հետո, այն սահմանված կարգով կներկայացվի Ազգային ժողով՝ վավերացման:

34. ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը և «Երեխաների իրավունքների պաշտպանության» կոնվենցիայի անհատական հաղորդումների ընթացակարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունը ստորագրվել են համապատասխանաբար 2009թ. սեպտեմբերի 29-ին և 2019թ. սեպտեմբերի 26-ին և ներկայումս անցնում են վավերացման ներպետական ընթացակարգեր:

35. ՀՀ կառավարության կողմից նախատեսվում է հիմնել միջազգային մոնիտորինգային մարմինների հետ աշխատանքը համակարգող մեխանիզմ՝ փոփոխություններ կատարելով ՀՀ կառավարության 23 ոյեմբերի 2007 թվականի թիվ 1483-Ն մեջ, որ, որի նախագիծը ներկայումս մշակվում է ԱԳՆ-ի կողմից: Մեխանիզմի ներդրումը հնարավորություն կտա ավելի արդյունավետ դարձնել ՀՀ-ին տրված հանձնարարականների իրականացման աշխատանքների համակարգումը, թարգմանությունը և տարածումը:

Հոդված 3

1. Ազգային փոքրամասնության պարկանոց յուրաքանչյուր անձ պետք է ունենա այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք: Այդ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որոնք կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնեն անբարենպաստ պայմաններում:
2. Ազգային փոքրամասնությունների պարկանոց անձինք անհատապես, ինչպես նաև մյուսների հետ խմբերով կարող են իրականացնել իրավունքներ և օգտվել ազատություններից, որոնք բխում են սույն Շրջանակային կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից:

36. Սահմանադրության 56-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք, իսկ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք: 2015 թ. Սահմանադրական բարեփոխումների արդյունքում գրանցված ձեռքբերումներից է վերը հիշատակված իրավունքների իրականացումը օրենքով կարգավորելու հրամայականը:

37. «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք են ՀՀ այն քաղաքացիները, ովքեր հանդիսանում են իրենց ուրույն ազգային կամ էթնիկ ինքնություն ունեցող, ՀՀ-ում պատմականորեն ձևավորված խմբի՝ ազգային փոքրամասնության անդամ:

Նախագծի 4-րդ հոդված համաձայն՝ ազգային փոքրամասնությանը պատկանող անձն իրավունք ունի այդպիսին համարվելու կամ չհամարվելու իրավունք: Այդ ընտրությունը, ինչպես նաև դրա հետ կապված իրավունքների իրականացումը չպետք է հանգեցնեն այդ անձի համար անբարենպաստ հետևանքների: Ոչ ոք չի կարող հարկադրել որոշելու կամ նշելու իր ազգային և էթնիկ ինքնությունը, պատկանելությունը որևէ ազգային փոքրամասնությանը, ինչպես նաև չի կարող հարկադրվել դրանցից հրաժարվելուն:

38. Շարունակում է գործել «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությանը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կարգավորումները առ այն, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ցանկությամբ նրա անձնագրում կարող է կատարվել նշում ազգության մասին՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության կամ նրա տարածքային ստորաբաժանումների, իսկ օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից:

Հոդված 4

1. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնություններին պարկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն: Այդ առումով արգելվում է ազգային փոքրամասնության պարկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն:

2. Կողմերը պարտավորվում են անհրաժեշտ դեպքերում ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի փնտրեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցեն ազգային փոքրամասնությանը և բնակչության մեծամասնությանը պարկանող անձանց միջև լիակատար և իրական հավասարությունը: Այս նպատակով Կողմերը, ըստ պարզաճի, պետք է հաշվի առնեն ազգային փոքրամասնությունների պարկանող անձանց առանձնահատուկ պայմանները:

3. Երկրորդ կետի դրույթներին համապատասխան ընդունված միջոցները չպետք է համարվեն խտրականություն:

39. Սահմանադրության 29-րդ հոդվածը ամրագրում է, որ խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

40. Հիշյալ սահմանադրական երաշխիքը արտացոլվել է «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածում, համաձայն որի ՀՀ ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով խտրականության արգելքը: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն ՀՀ ազգությամբ հայ քաղաքացիների հետ հավասար իրավունքներ և պարտականություններ: Ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորությունների ապահովման հետ կապված հարաբերությունների կարգավորումները նախատեսվել են «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծով:

41. «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ խտրականությունը վերաբերմունք է, գործողություն, անգործություն կամ կարգավորում, որն արտահայտվել է անձի իրավունքների և ազատությունների տարբերակմամբ, բացառմամբ, սահմանափակմամբ կամ նախապատվությամբ՝ կախված այդ թվում ազգային փոքրամասնությանը պատկանելությունից: Նախագծով առաջարկվող կարգավորումների համաձայն՝ նման վերաբերմունքը կարող է որակվել որպես խտրականություն, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում, հետապնդվող իրավաչափ նպատակի ու ընտրված միջոցների միջև առկա չէ ողջամիտ համաչափություն:

42. Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում համապատասխան միջոցներ են ձեռնարկում ուղղված՝

- 1) ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով խտրականության դեպքերի կանխարգելմանը,
- 2) ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով խտրականության ենթարկված անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը,
- 3) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բնագավառներում իրավահավասարության ապահովմանը,
- 4) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հանրության իրազեկվածության բարձրացմանը, ինչպես նաև նրանց նկատմամբ անհանդուրժողականության բացառմանը:

43. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 5-րդ մասը ամրագրում է, որ ամուսնանալիս և ընտանեկան հարաբերություններում արգելվում է խտրականությունը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, *ազգային փոքրամասնության պատկանելությունից*, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

44. «Ոստիկանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ոստիկանությունը պաշտպանում է մարդու իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև օրինական շահերը՝ անկախ նրա սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական

հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Հոդված 5

1. Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական փարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

2. Իրենց ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականության իրականացման համար ձեռնարկվող միջոցներին ոչ ի վնաս Կողմերը պետք է ձեռնպահ մնան ցանկացած քաղաքական կամ գործնական գործողությունից, որը հետապնդում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, հակառակ նրանց կամքի, միաձուլելու նպատակ, և պետք է այդ անձանց պաշտպանեն այդպիսի միաձուլմանն ուղղված ցանկացած գործողությունից:

45. Սահմանադրության 56-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք: Ավելին՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

46. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ինտերնետային www.mincult.am կայքում առանձին էլեկտրոնային էջ էր տրամադրված Հայաստանում գործող ազգային փոքրամասնությունների միությունների գործունեությանը և տեղեկություն՝ մշակութային համագործակցության ուղղությունների, համատեղ իրականացվող ծրագրերի ու միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացված էր ՀՀ-ում գործող ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ցանկը:

47. 2019թ. ավարտվել է Հայաստանում եզդիների՝ աշխարհում ամենամեծ՝ Մալաքե Թաուսի և յոթ հրեշտակների անունը կրող տաճարի կառուցումը: Յոթ գմբեթներով ճերմակ տաճարը՝ գրանիտից ու մարմարից, կառուցվել է մայրաքաղաք Երևանից 35 կիլոմետր հեռու գտնվող՝ եզդիներով բնակեցված Ակնալիճ փոքրիկ գյուղում: 25 մետր բարձրություն ունեցող տաճարում մեծ աղոթասրահ, կրոնական դպրոց և թանգարան կա: Յոթ գմբեթները խորհրդանշում են եզդիների հավատքի յոթ սրբերին: Տաճարի օձման արարողությունը տեղի ունեցավ 2018թ. սեպտեմբերի 29-ին՝ Համայն Եզդիների հոգևոր առաջնորդի գլխավորությամբ, իսկ բացումը 2019թ. սեպտեմբերի 29-ին աշխարհի տարբեր երկրներից ժամանած հազարավոր եզդիների մասնակցությամբ: Երևանի Օղակաձև այգու տարբեր հատվածներում տեղակայված են եզդիների, ասորիների և հրեաների ցեղասպանության զոհերի հուշարձաններ, որտեղ պարբերաբար կատարվում են հարգանքի տուրքի արարողություններ:

48. Ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության, մշակույթի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը մշտապես նպաստելը հանդիսանում է մշակութային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը սերտ համագործակցության մեջ է ազգային փոքրամասնությունների միությունների և հասարակական կազմակերպությունների հետ և աջակցում է համերգների, ցուցահանդեսների և այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանը: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունում ազգային փոքրամասնությունների միությունների ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ, խորհրդակցություններ, ուր քննարկվում են համատեղ միջոցառումների ծրագրերը, մշակույթի ոլորտում ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրները, օրենսդրական դաշտի կատարելագործման առաջարկները: Քննարկումների արդյունքում կազմվում են արձանագրություններ և համապատասխան ստորաբաժանումներին տրվում հանձնարարականներ:

49. Հայաստանի Պետական Ֆիլիարմոնիայում իրականացվել է «Տարբեր ազգերի երգեր ու պարեր» փառատոնը, որին մասնակցեցին մի շարք պարային խմբեր, մեներգիչներ: Փառատոնին մասնակցում էին նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Ներկայացվեցին ինչպես հայկական երգեր ու պարեր, այնպես էլ ռուսական, հրեական:

50. Հայաստանի ազգային գրադարանում 2015-2018 թթ. առկա է և ազգային փոքրամասնությունների լեզուներով գրականություն. ռուսերեն լեզվով՝ 1.609144 միավոր դասագիրք, գեղարվեստական գրականություն, կրոնական գրականություն, արվեստ, պատմություն, լեզվաբանություն, փիլիսոփայություն, բնական գիտություններին վերաբերող, եզրհեր են լեզվով՝ 29 միավոր դասագիրք, ասորերեն՝ 5 միավոր դասագիրք, քրդերեն՝ 672 միավոր, ուկրաիներեն՝ 654 միավոր, հունարեն՝ 1042 միավոր, վրացերեն՝ 5150 միավոր, պարսկերեն՝ 2251 միավոր: Ընթերցողների թիվը նշված տարիների ընթացքում կազմել է շուրջ 1000 մարդ: Ընթերցվում է հիմնականում ռուսերեն /դասագիրք, գեղարվեստական գրականություն, կրոնական գրականություն, արվեստ, պատմություն, լեզվաբանություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ/: Փոքրամասնություն կազմող ազգերից Հայաստանի ազգային գրադարանում գրանցված են 2 եզդի, 25 քուրդ, 3 ասորի ընթերցող:

51. Աջակցություն է ցուցաբերվել ազգային փոքրամասնությունների լեզուներով մամուլի, գրականության հրատարակման և մամուլի էջերի թվայնացման գործընթացի շարունակականության ապահովման համար: Հայաստանի ազգային գրադարանի կողմից իրականացվող թվայնացման գործընթացի առաջնահերթություններից է ազգային փոքրամասնությունների լեզուներով մամուլի և գրականության թվայնացումը: «Հայ մամուլ» շտեմարանում ազգային փոքրամասնությունների հրատարակած բոլոր պարբերականները գրառված են, իսկ հինգ պարբերականների՝ Էզդիխանա, Ե., 2001 (եզդիերեն), Ռյա թազա, Ե. 1930 (քրդերեն), Գոլոս Արմենիի, Ե. 1991- (ռուսերեն), Մագեն Դավիդ, Երևան, 2002 (եբրայերեն, հայերեն), Պոկա մի ժիվի. Póki my żyjemy, Ե., 2003 (լեհերեն) թվային տարբերակները տեղադրված են:

52. 2015 թ. «Աջակցություն ազգային փոքրամասնություններին» ծրագրով դրամաշնորհ է տրվել նրանց միջոցառումների կազմակերպմանը:

Ծախսային ծրագրի անվանումը	Հատկացված դրամ)	Դրամաշնորհի ստացողի անունը
ՀՀ մարզերում եզրիական մշակութային, կրթական տոնական միջոցառումների կազմակերպում	300.0	«Սինջար» եզրիների ազգային միություն» ՀԿ
Եզրիների ցեղասպանության դատապարտմանը նվիրված ցուցահանդեսի կազմակերպում	150.0	«Միջերնիկ և Միջ-մշակութային համագործակցությունների կենտրոն» մարդասիրական ՀԿ
Հույների ցեղասպանության մասին «Արգոնավորդների հետքերով» վավերագրական հայերեն թարգմանություն	264.0	«Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնք» ՀԿ
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Վիլյամ Վայների 60-րդ տարեդարձին նվիրված հոբելյանական երեկոյի կազմակերպում:	1200.0	«Մենորա» հրեական մշակութային կենտրոն ՀԿ-ին
Հայաստանում ու արտերկրում ռուսալեզու հանրության համար հրատարակվող «Համբերություն քեզ մարդ» գիրք-ժողովածուի (ռուսերեն լեզվով) հրատարակում:	1086.0	«Գրքի ու հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ
Ընդամենը՝	3000.0	

53. 2016 թ. «Աջակցություն ազգային փոքրամասնություններին» ծրագրով դրամաշնորհ է տրվել հետևյալ ծրագրերին.

Ծախսային ծրագրի անվանումը	Հատկացված դրամ)	Դրամաշնորհի ստացողի անունը
Եզրիների մշակութային, կրթական, ազգային տոների, ավանդական միջոցառումների կազմակերպման աջակցություն	500.0	«Եզրիների ազգային միություն» ՀԿ
Եզրիների Նոր տարվա տոնակատարության կազմակերպման աջակցություն	200.0	«Սինջար» եզրիների ազգային միավորում» ՀԿ-ին՝
«Հունաստանի Հանրապետությունում «Grape festival «The harvest by the centuries, Stimagas» միջազգային ժողովրդական պարի փառատոնին «Խարիտոնի» հունական համույթի մասնակցությանը.	1300.0	«Հունական հասարակական կազմակերպությունների միություն» ՀԿ
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, երաժիշտ-կոմպոզիտոր Վիլյամ Վայների երգչախմբային ստեղծագործությունների «Willy Weiner & Friends» ձայնասկավառակի ձայնագրմանն ու հրատարակմանը.	1000.0	«Մենորա» հրեական մշակութային կենտրոն» ՀԿ
Ընդամենը՝	3000.0	

54. 2017 թ. «Աջակցություն ազգային փոքրամասնություններին» ծրագրով դրամաշնորհ է տրվել հետևյալ ծրագրերին.

Ծախսային ծրագրի անվանումը	Հատկացված դրամ)	Դրամաշնորհի ստացողի անունը
«Եզրիների «Խրդր Նավի»	170.0	«Եզրիների ազգային միություն»

տոնակատարության կազմակերպմանը.		ՀԿ
Զովունիում և Եղվարդում ավանդական եզդիական տոներին («Չարշամա սարե սալե» եզդիների նոր տարի, «Չլե հավինե» տոն) նվիրված միջոցառումների կազմակերպմանը.	500.0	«Եզդիների ազգային միություն» ՀԿ
Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մշակույթի տարածմանը, ավանդույթների պահպանմանն ու զարգացումն ուղղված ազգային փոքրամասնությունների մշակութային փառատոնի կազմակերպմանը	1500.0	«Ներկա» կրթամշակութային ՀԿ
Հայ-խորայելական մշակութային հարաբերությունների ամրապնդմանը, ինչպես նաև Հայաստանում ազգային փոքրքմասնությունների մշակույթի տարածմանն ու պահպանմանը նպաստելու նպատակով հրեական «Մագեն Դավիթ» թերթի լույս ընծայման 30-ամյակին նվիրված ծրագրի իրականացում	150.0	«Մենորա» հրեական մշակութային կենտրոն» ՀԿ «Հայաստանի պետական ֆիլիարմոնիա» ՊՈԱԿ
Հայաստանում «Դնիպրո» համույթի ստեղծման, «Դնիպրո-Սլավուտիչ» թերթի լույս ընծայման 20-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպում	150.0	«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» «Հայաստանի պետական ֆիլիարմոնիա» ՊՈԱԿ
Ընդամենը՝	2470.0	

55. 2018թ. «Աջակցություն ազգային փոքրամասնություններին» ծրագրով դրամաշնորհ է տրվել հետևյալ ծրագրերին.

Ծախսային ծրագրի անվանումը	Հատկացված դրամ)	Դրամաշնորհի ստացողի անունը
Եզդիների մշակութային, կրթական, ազգային տոների, ավանդական միջոցառումների կազմակերպման աջակցություն	500.0	«Եզդիների ազգային միություն» ՀԿ
Հայաստանաբնակ եզդիների կենցաղը, մշակույթը, ստեղծագործական կյանքը լուսաբանող «Էզդիխանա» թերթի գործունեությանը	750.0	«Եզդիների ազգային միություն» ՀԿ
«Քուրդ ժողովրդի համերաշխության օրվա» ապակցույամբ մշակութային միջոցառումների համալիր ծրագրի իրականացում	900.0	«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ
Ընդամենը՝	2150.0	

56. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ 2015-2018 թվականներին ազգային փոքրամասնությունների լեզուներով «Ազգային փոքրամասնությունների և այլ գրականության հրատարակում» ծրագրով հրատարակվել է 6 անուն գիրք, այդ թվում՝ Ամարիկե Սարդարի «Կարոտ» վեպը, Ալեքսանդր Պորյադոչնիի «Արծաթե թելը» վեպը, Մուսաբեկ Զամալի «Լեռների ծիածանը» պատմվածքների ժողովածուն, Ն. Նիկոլաիդի և Ա. Խուրշուդյանի «Սակկիլարի» գիրքը, Ամո Շառոյանի «Շանգալի ցավը» արձակ ժողովածուն, Ալիխանե Մամեի «Բանաստեղծություններ»-ը:

57. 2015-2017 թթ. «Գրականության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում հրատարակվել է նաև գրականություն ազգային փոքրամասնությունների լեզուներով: Հրատարակվող գրականության ցանկը բերվում է ստորև ներկայացվող աղյուսակներում.

Հ/Հ	Հեղինակը	Գրքի անվանումը	Գումարը (հազ. դրա)
2015 թ.			
1	Ամարիկե Սարգսար	«Կարոտ» (քրդերեն)	750,0
2	Ալեքսանդր Պորյադոչնի	«Արծաթե թելը» (հայերեն)	400,0
AY ¹³ U»YA'			1150,0
2016 թ.			
1	Մուսգե Զամալ	«Լեռների ծիածանը»	400,0
2.	Ն. Նիկոլաիդի և Ա. Խուրշուդյանի	«Սակկիլարի»	320.0
AY ¹³ U»YA'			720,0
2017 թ.			
1	Ամո Շառոյանի «Շանգալի ցա	«Շանգալի ցավը»	495,0
2	Ալիխանե Մամե	«Բանաստեղծություններ»	390,0
AY ¹³ U»YA'			885.0

58. 2015-2018 թթ. «Ոչ պետական մամուլի հրատարակում» պետական ծրագրի շրջանակներում գրքերի, թերթերի և «Աշակցություն ազգային փոքրամասնություններին» ծրագրով դրամաշնորհ մշակութային միջոցառումներին պետական բյուջեից հատկացված միջոցները.

	2015	2016 թ.	2017 թ.	2018 թ.	2019 թ.
Թերթեր	11077.0	11077.0	11077.0	7000.0	10800.0
Գրքեր	1150.0	720.0	885.0		
Մշակութային միջոցառում	3000.0	3000.0	2470.0	2150.0	4200.0
Ընդամենը	15227.0	14797.0	14432.0	9150.0	15000.0

59. Աշխատանքներ են տարվում ազգային փոքրամասնությունների ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի գրանցման և ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության պետական ցանկերում ներառման ուղղությամբ: 2015-2017 թվականներին Գյումրիում իրականացվել է «Հացի փառատոն» միջոցառումը, որին մասնակցել են նաև ազգային փոքրամասնությունները՝ ներկայացնելով ազգային հացատեսակներն ու տարազները: Այդ ամենը միաժամանակ նպաստում է ազգային փոքրամասնությունների միջև կապերի պահպանմանն ու զարգացմանը, արդյունավետ լեզվական հաղորդակցմանն ու փոխըմբռնմանը:

60. ՀՀ կառավարության 2019 թ. սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 1-ի N 241-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1302-Ն որոշմամբ ՀՀ մշակութային տարածքների պետական ցանկը համալրվեց ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության նոր կենսունակ տարածքներով՝ այդ թվում ՀՀ Արարատի

մարզի Վերին Դվին գյուղի մասին տեղեկատվությամբ, որը համարվում է Հայաստանի ասորի ազգային փոքրամասնության էթնիկ մշակութային նկարագիր ունեցող բնակավայր: 2018-2019 թթ. իրականացվել են եզրի ազգաբնակչության ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանն ու փոխանցմանն ուղղված ծրագրեր:

61. 2019 թ.-ի «Պետական աջակցություն ոչ պետական մամուլին» բյուջետային ծրագրով ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլի հրատարակման համար նախատեսվել է 15000.0 հազ. դրամ, ինչը 18%-ով ավելի է, քան 2018 թ.:

62. Իրավական ակտերով դյուրացվել են (տեղական մամուլի հետ համեմատությամբ) ազգային փոքրամասնությունների մամուլին տրամադրվող պետական աջակցության չափորոշիչները: Պետական ֆինանսավորմամբ աջակցություն է տրամադրվում Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող պարբերական գրական, մշակութային, գիտական և այլ մամուլի հրատարակմանը, այդ թվում՝ եզրիների համայնքի «Էզրիխանա» և «Լալըշ» հայերեն թերթերի, ռուսական համայնքի «Գոլոս Արմենիի», «Նոլոյե վրեմյա» թերթերի, վրացական համայնքի «Իվերիա» թերթի, լեհական համայնքի «Պոկա մի ժիվի» թերթի (ռուերեն, լեհերեն) և «Զագրոս» քրդերեն թերթերի, հունական համայնքի «Իլիոս» թերթի, ինչպես նաև ասորական համայնքի «Ассирийские новости» և «Ասսիրիյսկիե նովոստի» թերթը՝ ռուերեն և ասորերեն լեզուներով թերթերի:

63. Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում գործում են մի շարք կառույցներ, որոնք ակտիվ դեր ունեն ռասայական խտրականության դեմ պայքարի, խտրականության հանգեցնող նախապաշարմունքների վերացման, հանդուրժողականության խթանման հարցերում: Օրինակ՝ ստորև ներկայացվում են վերը հիշատակված Ազգությունների խորհրդի իրականացրած մի շարք միջոցառումներ.

- Նշվում է ազգային փոքրամասնությունների համայնքների ազգային պետության անկախության օրվա տարելիցը:

- Նշվում են ազգային փոքրամասնությունների համայնքների ազգային ավանդական տոները:
- 2016-2018 թթ. ընթացքում կազմակերպվել են ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հանդիպումներ իրենց երկրներից ժամանած պաշտոնական պատվիրակությունների ղեկավարների հետ, այդ թվում՝ ՌԴ-ից, Ուկրաինայից, Իսրայելից, Քուրդիստանից, Գերմանիայից ժամանած պատվիրակությունների հետ: Պարբերական են դարձել ասորիների արտերկրյա ներկայացուցիչների այցերը:

-Հայաստանի ազգային փոքրամասնությունների պատվիրակները ընդգրկվում են իրենց երկրներում Հայ մշակույթի օրերի պատվիրակության կազմում, ինչպես նաև մշակութային ծրագրերում:

- Հայաստանի Հանրապետության մշակույթի հարցերով պատկան գերատեսչության ֆինանսավորմամբ երևանում և մարզերում ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների մասնակցությամբ ավանդաբար անցկացվում են գեղարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ցուցահանդեսներ և երաժշտական փառատոներ: 2015-2018 թվականներին համապատասխանաբար կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների երաժշտական 3 փառատոն և 3 ցուցահանդես:

- Հայաստանի պետական ֆիլիարմոնիայում ամեն տարի կազմակերպվում է «Տարբեր ազգերի երգեր ու պարեր» փառատոնը, որին մասնակցում են տարբեր ազգային փոքրամասնությունների պարային խմբեր, մեներգիչներ:

- ՀՀ մշակույթի նախարարությունը յուրաքանչյուր տարի «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրով պետական բյուջեից 800.0 հազար դրամ է տրամադրում «Հայաստանի ասորական կազմակերպությունների «Խայադթա» Ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը «Ասորիսկիե նովոստի» ռուսերեն, ասորերեն թերթի տպագրման համար: Թերթը տպագրվում է տարեկան 12 համար, 500 տպաքանակով, 2 մամուլ ծավալով: Թերթի երկու էջը ասորերենով է:

- Հայաստանի Հանրապետության բյուջեում ազգային փոքրամասնությունների մշակութային ծրագրերին աջակցության ֆինանսական ծավալները մշակվում են համաձայն համայնքներից ներկայացված հայտերի: Մշակութային հայտերը ներկայացնելու նպատակով ՀՀ մշակույթի նախարարությունը իր պաշտոնական կայքէջում www.mincult.am տեղադրում է դրամաշնորհների ներկայացման հայտարարություն, ինչը բաց է և հնարավորություն է տալիս բոլոր ազգային փոքրա մասնություններին ներկայացնելու իրենց ծրագրերը:

64. 2015-2018 թվականներին ՀՀ ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդում հաստատված ՀՀ պետական բյուջեով նախատեսված ամենամյա դրամաշնորհային ծրագրերի հաշվին իրականացված առավել կարևոր ծրագրեր.

1. «Պատմության անիվ» խորագրով միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 100-ամյակին, Հոլոքոստին և ՀՄՊ-ի հաղթանակի 70-ամյակին:
2. «Դնիպրո» ուկրաինական համույթի մարզային միջոցառումներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 100-ամյակին:
3. Եզդիաբնակ 5 համայնքներում դասընթացների կազմակերպում՝ կրթության դերի բարձրացման նպատակով
4. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին նվիրված գրքի հրատարակում, որտեղ զետեղված են պատերազմի մասնակիցների հուշերը:
5. Իրանում կայանալիք ամենամյա համասորական խաղերին Հայաստանի ասորական համայնքի սպորտային խմբի մասնակցություն:
6. Հայաստանի վրացական համայնքի ներկայացուցիչների պատվիրակության մասնակցությունը Թբիլիսիում կայացած վրացական համայնքների միջազգային ֆորումին:
7. «ՀՀ ազգային փոքրամասնություններն ընդդեմ ցեղասպանությունների» խորագրով միջոցառումներ Երևանում և Վանաձորում:
8. Հայ-հրեական համաժողով՝ նվիրված Հայաստանի հրեական համայնքի 25-ամյակին:
9. Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիայի կողմից համերգների կազմակերպում Իջևանում և Վանաձորում՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին:
10. «Մենորա» հրեական մշակույթի կենտրոնի» կողմից իրականացված «Դեպի հանդուրժողականություն մշակույթի միջոցով» լայնածավալ ծրագիր:
11. Մինսկում կայացած բելառուսական մշակույթի փառատոնին Հայաստանի բելառուսական համայնքի ներկայացուցիչների մասնակցություն:
12. «Դնիպրո» ուկրաինական համույթի և «Դնիպրո-Սլավուտիչ» թերթի 20-ամյա հոբելյաններին նվիրված միջոցառում:
13. Եզդիների կրթամշակութային երկօրյա հավաք Արմավիրի մարզում:
14. Արտագերս համայնքի ասորական ազգային համույթի համար տարազների ձեռքբերում:
15. Հայաստանի Հանրապետությունում զարգացած եզդիական համայնք» խորագրով ծրագրի իրականացում:

16. Ազգային փոքրամասնությունների միասնական միջոցառում ՀՀ սահմանամերձ շրջանում՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին:
17. Ռուսական, վրացական, լեհական, բելառուսական, հունական համայնքները ներկայացնող կազմակերպությունների հիմնադրման հորեյլաններին նվիրված միջոցառումներ:
18. «Կրթության դերի բարձրացումը եզդիների շրջանում» խորագրով միջոցառում:
19. «Հայ-վրացական նոր ելևէջները» խորագրով միջոցառում՝ նվիրված Հայաստանի և Վրաստանի անկախության 25-ամյակին՝ հայ և վրացի մշակութային գործիչների մասնակցությամբ:
20. Կովկասում շվաբների վերաբնակեցման 200-ամյակին նվիրված միջոցառում «Տեվտոնիա» գերմանական մշակույթի կենտրոն կազմակերպության կողմից:
21. Գյումրի քաղաքի հունական համույթի համար ազգային հանդերձանքի ձեռքբերում:
22. Քրդական համայնքի համույթի համար ազգային տարազների ձեռքբերում, «Ջագրոս» և «Ռիա Թազա» թերթերի տպագրման աջակցում:

65. Հաշվետու ժամանակահատվածում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները արժանացել են հետևյալ պետական պարգևների.

- Յուրի Յակովենկո (ռուսական համայնք)՝ Մովսես Խորենացու մեդալ, 2017թ.;
- Սվետլանա Նամջևաձե (վրացական համայնք)՝ Երախտագիտության մեդալ, 2017թ.:
- Միրզա Սլոյան (եզդիական համայնք)՝ Անանիա Շրակացի մեդալ, 2017թ.:

66. ՀՀ-ն պետական պաշտպանության ներքո է վերցրել ՀՀ տարածքի բոլոր պատմաճարտարապետական, մշակութային և կրոնական կառույցները՝ անկախ դրանց էթնիկ կամ կրոնական պատկանելությունից: Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանող և պատմական հուշարձաններից բացի Հայաստանի տարբեր մարզերում հաշվառված են և պահպանվում են մոտ 50 մուսուլմանական հուշարձան, որոնց մեծամասնությունը գերեզմանոցներ են:

67. 2018թ. Համընդհանուր իրավունքների մրցանակաբաշխության «Ներառականության խթանում» անվանակարգում մրցանակ է շնորհվել Ոստ Նադոյանին /ազգությամբ եզդի/՝ եզդի համայնքի երիտասարդների համար հավասար հնարավորություններ ստեղծելու և կանանց ու աղջիկների ուսման կարևորությունը բարձրացնելու գործին բացառիկ նվիրվածության համար:

Հոդված 6

1. Կողմերը պետք է խրախուսեն հանդուրժողականության մշակույթների միջև երկխոսության մթնոլորտը և պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց միջև, անկախ նրանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելությունից, փոխադարձ հարգանքը, փոխըմբռնումը և համագործակցությունը խթանելու համար, մասնավորապես, կրթության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառներում:
2. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պարտառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնի գործողությունների զոհ:

68. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչությունում ստեղծվել է ազգային փոքրամասնության ներկայացուցիչ աշակերտների տվյալների բազա՝ վերջիններիս իրենց ազգային տոներին կամ այլ միջոցառումներին ներգրավելու և նրանց մասնակցությունն այդ միջոցառումներին խրախուսելու նպատակով:

69. Երևանի ենթակայության մանկապարտեզներում ՀՀ ազգային փոքրամասնության ներկայացուցիչների համար կրթադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են բոլոր երեխաների համար հավասար և մատչելի կրթության իրավունքի ապահովման սկզբունքով: Երևանի ենթակայության մանկապարտեզներում, որպես լրացուցիչ կրթական ծառայություն, իրականացվում է ռուսերեն և անգլերեն լեզուների ուսուցում: Երեխաները նշված գործընթացին մասնակցում են ծնողների կամ օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ և ընտրությամբ: Հաշվի առնելով, որ ՀՀ ազգային փոքրամասնությունների՝ մանկապարտեզներ հաճախող երեխաները մեծ թիվ չեն կազմում և ընդգրկված են Երևանի տարբեր վարչական շրջանների մանկապարտեզներում՝ առանձնացված խմբերի գործարկում չի իրականացվում:

70. Կարևորվել են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար դպրոցներում ուսումնական բազայի բարելավման և կադրերի մասնագիտական զարգացման գործընթացները: 2018-2019 թ. ուստարվա համար պատվիրվել է «Խոսիր ասորերեն» /1-ին դասարան/«Խոսիր և գրիր ասորերեն»/2-րդ դասարան/,«Ալափ –Բիթ» /3-րդ» դասարան/, Քրդերեն /1-ին ,4, 5,6-րդ դասարան «Եզդիերեն»՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 11-րդ,12-րդ դասարանների դասագրքերը: Հանրակրթական դպրոցներում ազգային փոքրամասնությունների կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ /եզդիերեն-/ Յուսուցիչ/ 2018թ., ասորերեն-2 ուսուցիչ 2017թ./:

71. «Ազգային փոքրամասնությունների երեխաների համար որակյալ կրթություն ստանալու հնարավորության ընդլայնման, շրջանակում, 2017 թվականից Երևանի քաղաքապետարանի հհ.66,107,136 դպրոցներում գործում են եզդիերենի անվճար խմբակներ: Խմբակներում ընդգրկված է I-XII դասարանների թվով 47 ազգությամբ եզդի աշակերտ:

72. <<Էեռուստատեսության և ռադիոյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածը միանշանակ արգելում է հեռուստառադիոհաղորդումների օգտագործումը ազգային, ռասայական և կրոնական թշնամանք կամ երկպառակություններ սերմանելու նպատակով: Հանրային հեռուստատեսությունը և ռադիոն պարբերաբար հաղորդումներ են հեռարձակում Հայաստանի էթնիկ համայնքների մասին՝ նվիրված նրանց պատմությանը, կրթությանը, մշակույթին, լեզվին, իրավունքներին: Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությունում չկան զանգվածային լրատվական միջոցներ, որոնք կտարածեին բացասական կարծրատիպեր էթնիկական փոքրամասնությունների մասին:

73. Եզդիական համայնքի ջանքերով կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի հոբելյաններին: Ամեն տարի, ապրիլի 24-ին Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները նույնպես այցելում են Օսմանյան

կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր՝ Ծիծեռնակաբերդ:

74. 2018 թ. փետրվարի 21-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակված որպես Մայրենի լեզվի միջազգային օր Հայաստանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի անդամների պարբերական նախաձեռնությունների շնորհիվ լայնորեն նշվում է Հայաստանում: Հայաստանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի քարտուղարությունը նախաձեռնել էր Հայաստանում մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված տոնակատարություն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության և կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի հետ համատեղ: Այս նախաձեռնության շրջանակներում Հայաստանում ներկայացված 11 ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հրավիրվել էին մասնակցելու «Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքները» թեմայով կլոր սեղանին՝ նշելու Մայրենի լեզվի միջազգային օրը և քննարկելու ազգային փոքրամասնությունների խնդիրներն ու մարտահրավերները, որոնց նրանք առնչվում են իրենց մայրենի լեզուն պահպանելիս ու գործնականում կիրառելիս: Նշյալ միջոցառման ընթացքում մասնակիցները բարձրաձայնեցին իրենց մտահոգությունները և հանդես եկան ոլորտը բարելավելու առաջարկներով: Դրանք պատշաճ կերպով արձանագրվեցին հանդիպմանը մասնակցող համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների կողմից, որոնց թվում էին ՀՀ Լեզվի պետական տեսչության և ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ներկայացուցիչները: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հրավիրվեցին մասնակցելու մեկ այլ կլոր սեղանի՝ քննարկելու «Լեզվի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրինագիծը:

Հոդված 7-8 Հոդված 7

Կողմերը պետք է ապահովեն ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հանրահավաքների, միությունների մեջ ընդգրկվելու, խոսքի, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքների հարգումը:

Հոդված 8

Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ սեփական կրոնը կամ հավատը բացահայտ դավանելու, ինչպես նաև կրոնական հաստատություններ, կազմակերպություններ,- ընկերություններ ստեղծելու իրավունքը:

75. ՀՀ սահմանադրության 41-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր անձի, այդ թվում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին, օգտվելու սահմանադրորեն երաշխավորված մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքից: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք, ինչպես միայնակ, այնպես էլ՝ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:

76. Սահմանադրությամբ ամրագրված է նաև զինվորական ծառայությունը կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասելու պարագայում, օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունքը, ինչը հավասարապես կիրառելի է նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների դեպքում:

77. Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք: «Հավաքների ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հավաքներին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք (ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք): Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու անձին մասնակցել որևէ հավաքի կամ խոչընդոտել նրա մասնակցությունը որևէ հավաքի: Հիշյալ կարգավորումը հավասարապես տարածվում է նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա:

78. Ազգային փոքրամասնությունների կրոնի պահպանման և զարգացման իրավունքը երաշխավորված է Սահմանադրության 56-րդ հոդվածի 2-րդ մասով: Բացի այդ, վերջիններս կարող են ներգրավվել կրոնական կազմակերպությունների մեջ և ծավալել իրենց գործունեությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը և նրանք անջատ են պետությունից:

79. Սահմանադրական երաշխիքները իրենց արտացոլումն են գտելը և ավելի մանրամասն կարգավորում են ստացել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի շրջանակում՝ ամրագրելով մտքի, խղճի և կրոնի ազատության, ազգային կրոնական տոներ նշելու, կազմակերպություններ ստեղծելու իրենց իրավունքները:

80. Ներկայումս ՀՀ վարչապետի աշխատակազմում է գտնվում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնց նպատակն է իրավական կարգավորումները համապատասխանեցնել ներկա իրավիճակին, ինչպես նաև ՀՀ-ում 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներին և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերին:

81. ՀՀ-ում պետական գրանցում են ստացել 66 կրոնական կազմակերպություններ, որոնցից յոթը պատկանում են ազգային փոքրամասնություններին:

Նշված կրոնական կազմակերպություններն են.

1. Երևանի Սուրբ Տիրամոր **ռուս** ուղղափառ եկեղեցու համայնքի կրոնական կազմակերպություն:
2. Վանաձորի Սուրբ Աստվածածնի ծննդյան **ռուս** ուղղափառ եկեղեցու համայնքի կրոնական կազմակերպություն:
3. «Ծաղկաձոր քաղաքի **ռուս** մոլորկանների կրոնական համայնք» կրոնական կազմակերպություն:
4. «**Ռուս** ուղղափառ եկեղեցու Սուրբ Աստվածածնի հովանի վանական համայնք» կրոնական կազմակերպություն:

5. ՀՀ **եզդիների** ազգային «Շեխե-Շեխու-բաքրա» հոգևոր խորհուրդ» կրոնական կազմակերպություն:

6. «Արևելքի **ասորական** կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի» Հայաստանի ասորական կրոնական կազմակերպություն:

7. Հայաստանի **հրեական** կրոնական համայնք:

82. Մշակութային պետական քաղաքականության իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների հետ համատեղ պարբերաբար կազմակերպում է Հայաստանի Հանրապետության մարզերից ու համայնքներից ստացված մշակույթի տների և ակումբների վերանորոգման և շինարարության կապիտալ ծախսերի վերաբերյալ միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի քննարկումներ: Քննարկումների արդյունքում տարբեր համայնքներում, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների բնակավայրերում պարբերաբար վերանորոգվում կամ կառուցվում են մշակույթի տներ:

83. Ազգային փոքրամասնությունների էթնիկ մշակույթի ներկայացման համար լրացուցիչ պայմանների ապահովման նպատակով քննարկվել են Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Զ. Սարկավազի 68 հասցեում գտնվող ռուս ուղղափառ եկեղեցու համալիրում ընդգրկված մկրտարանի կառուցման, թուրքմենական դամբարանի գմբեթի ամրակայման էսքիզային նախագծերը, ինչպես նաև համաձայնեցվել են Վերին Դվինի և Արզնիի ասորական եկեղեցիների նախագծանախահաշվային փաստաթղթերը:

84. 2018-2020 թվականների պետական բյուջեի միջնաժամկետ ծախսային ծրագրում ներկայացվել են ՀՀ Լոռու մարզի Ամրակից համայնքի ռուսական եկեղեցու նորոգման և տարածքի բարեկարգման գիտանախագծային փաստաթղթերի մշակման և իրականացման աշխատանքները: 2015 թ. կազմվել են Արգավանդ համայնքի Թուրքմենական դամբարանի ամրակայման, նորոգման և վերականգնման գիտանախագծային փաստաթղթերը, որի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 724.826 հազ. դրամ, իսկ 2017թ.՝ նույն հուշարձանի տարածքի բարեկարգման (ջրահեռացման) գիտանախագծային փաստաթղթերը, որի համար հատկացվել է 840.000 հազ. դրամ: 2018թ. ուսումնասիրությունների արդյունքում նախատեսվել է կազմել ՀՀ Վայոց ձորի Եզեգիս համայնքի Երբայական գերեզմանոցի (14-17-րդ դդ.) պահպանական գոտու նախագիծ:

85. 2019-2021թթ. նախատեսվում է ավարտել ազգային փոքրամասնություններին պատկանող հուշարձանների տարածքներում եռալեզու ցուցանակների տեղադրումը:

Տես նաև նախորդ զեկույցի 98-101 կետերը:

Հոդված 9

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիքներ

ունենալու - փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ պետական իշխանությունների միջամտությունից և սահմաններից: Իրենց իրավական համակարգի շրջանակներում Կողմերը պետք է ապահովեն, որպեսզի լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք չենթարկվեն խտրականության:

2. Առաջին կետը չի արգելում, որ Կողմերը ռադիոյի և հեռուստահեռարձակման կամ կինեմատոգրաֆիայի ձեռնարկությունների համար արտոնագրում պահանջեն՝ առանց որևէ խտրականության և օբյեկտիվ չափանիշների հիման վրա:

3. Կողմերը չպետք է արգելեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից տպագիր մամուլի միջոցների ստեղծումն ու օգտագործումը: Ռադիոյի – հեռուստահեռարձակման իրավական դաշտի շրջանակներում, որքանով դա հնարավոր է, և, հաշվի առնելով 1-ին կետի դրույթները՝ Կողմերը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար պետք է երաշխավորեն լրատվական սեփական միջոցների ստեղծման և օգտագործման հնարավորություն:

4. Իրենց իրավական համակարգերի շրջանակներում Կողմերը պետք է համապատասխան (համարժեք) միջոցներ ձեռնարկեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար լրատվական միջոցների մատչելիությունը դյուրացնելու, ինչպես նաև հանդուրժողականությունը խրախուսելու և մշակութային բազմակարծությունը ապահովելու համար:

86. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների արդյունքում ընդունվել է ««Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-153-Ն ՀՀ օրենքը:

87. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունների համաձայն, օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դ. ենթակետով հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության համար պարտավորություն է սահմանվել՝ եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններին՝ իրենց կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար:

88. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կողմից վերոնշյալ պարտավորությունը լիարժեք իրականացնելու համար Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին վերապահվել է լիազորություն՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որոշմամբ էլ սահմանվել են հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար տրամադրվող եթերային ժամանակի նվազագույն ժամաքանակներ:

Հանրային հեռուստատեսությամբ՝ շաբաթական առնվազն 30 րոպե
Հանրային ռադիոյով՝ օրական առնվազն 30 րոպե:

89. «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է նաև «Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման

վիճակի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու կարգը և հաշվետվության ձևը», որի համաձայն Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կողմից եռամսյա կտրվածքով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով է ներկայացվում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն, ներկայացնելով տեղեկատվություն նաև ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուներով հեռարձակվող հաղորդումների մասին»:

90. Հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրենք են մշակում և իրականացնում ծրագրային քաղաքականություն և, համաձայն օրենքի, հեռուստառադիոլսարանին պարտավոր են մատուցել այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը:

91. Հայաստանի Հանրային ռադիոն ամեն օր իրականացնում է հեռարձակում ազգային փոքրամասնությունների լեզուներով՝ մասնավորապես ասորերեն՝ 15 րոպե, քրդերեն՝ 30 րոպե, եզդիերեն՝ 30 րոպե, հունարեն՝ 15 րոպե: Աշխատանքային օրերին ռուսախոս ազգային փոքրամասնությունների համար հեռարձակվում է լրատվական-վերլուծական հաղորդում՝ 15 րոպե տևողությամբ:

92. Հանրային հեռուստատեսությամբ և այլ հեռուստաընկերություններով պարբերաբար հեռարձակվում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կամ նախաձեռնությամբ ազգային փոքրամասնությունների մասին վերլուծական, իրավունքների իրազեկման կամ տեղեկատվական հաղորդումներ՝ հիմնականում հայերեն կամ ռուսերեն լեզուներով: Հեռուստալրագրողների խնդրանքով ազգային փոքրամասնությունների միջոցառումները կամ տոնակատարությունները մեկնաբանելիս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները խոսում են իրենց լեզվով: Հանրապետության մարզերում գործող հեռուստաընկերությունները հաճախ ցուցադրում են տարբեր հաղորդաշարեր, պարբերաբար անդրադառնում են ազգային փոքրամասնությունների կողմից ներկայացվող խնդիրներին:

93. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող պարբերական գրական, մշակութային, գիտական և այլ մամուլի հրատարակմանը:

94. Ներկայացվում են ազգային փոքրամասնությունների լեզուներով հրատարակվող թերթերը, ամսագրերը՝ ըստ հաշվետու ժամանակաշրջանի:

«Պետական աջակցություն ոչ պետական մամուլին» բյուջետային ծրագրով ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլի համար 2015-2019թթ. ֆինանսական հատկացումները բերվում են ստորև ներկայացվող աղյուսակում:

2015-2019 թթ. «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրով նախատեսված հատկացումների բաշխումը՝ ըստ առանձին հրատարակումների /Ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող մամուլ/							
Հ/	Ծախսային ծրագիրը կատարող ՀՀ պետական կառավարման մարմիններ պետական աջակցություն ստացող իրավաբանական անձ հանդիսա- ցող սուբյեկտների անվանումները	Մամուլի անվանումները	Ընդհա- նուր գու- մարը /հազ. դրամ/ 11 077,0	Ընդհանուր գումարը /հազ. դրամ/ 11 077,0	Ընդհա- նուր գու- մարը /հազ. դրամ/ 11 077,0	Ընդհա- նուր գու- մարը /հազ. դրամ/ 7000,0	Ընդ- հա- նուր գու- մարը /հազ. դրամ/ 10800.0
			2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.	2019 թ.
Թերթեր							
1	«Եզդիների ազգային միություն» ՀԿ	«Էզդիխանա»	900,0	900,0	900,0	-	-
2	«Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ	«Լալըշ»	900,0	900,0	900,0	900,0	-
3	«Ռյա-Թագա» թերթի խմբա- գրություն» ՍՊԸ	«Ռյա-Թագա»	900,0	900,0	900,0	900,0	1200,0
4	«Գոլոս» ՍՊԸ	«Գոլոս Արմենիի»	500,0	500,0	500,0	500,0	-
5	«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ	«Դնիպրո- Սլավուտիչ»	2668,0	2668,0	2648,0	900,0	1200,0
6	«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ	«Զագրոս»	900,0	900,0	900,0	900,0	1200,0
7	«Հայաստանի հրեական համայնքի թերթ» ՀԿ	«Դավիթի վահան»	500,0	500,0	500,0	500,0	1200,0
8	«Իվերիա» վրացական բարեգոր- ծական համայնք» ՀԿ	«Իվերիա»	500,0	500,0	500,0	500,0	-
9	«Նովոյե վրեմյա» օրաթերթի խմբա- գրություն» ՍՊԸ	«Նովոյե վրեմյա»	500,0	500,0	500,0	500,0	-
10	«Հայաստանի «Երևանի բելառուս- ների համայնք «Բելառուս» ՀԿ	«Բելառուս» (ռուսերեն, բելառուսերեն)	500.0	500.0	300,0	300,0	1200,0
11	«Հայաստանի ասորական կազմակերպությունների «Խայա- դթա» ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն	«Ասիրիսկիե նովոստի» (ռուսերեն, ասորերեն)	800.0	800.0	800.0	800,0	1200,0
12	«Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնք» ՀԿ	«Իլիոս» (ռուսերեն, հայերեն, հունարեն)	500.0	500.0	500.0	500,0	1200,0
13	«Բիզնես զեթ-փիար» գովազդային հրատարակչություն» ՍՊԸ	«Արգումեն- տի նեդելի վ Արմենիի» (ռուսերեն)	500.0	500.0	500.0	-	-
14	«Եզդիների ծայն» խմբագրություն» ՍՊԸ	«Էզդիխանա»					1200.0
Ամսագրեր							
1.	«Լեհական միություն Հայաստա- նում «Պոլոնիա» բարեգործական» ՀԿ	«Պոկա մի ժիվի»	529,0	529,0	529,0	500,0	500,0

Հողված 10

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ անձնական կյանքում, հասարակական վայրերում իր փոքրամասնության լեզվից բանավոր և գրավոր անարգել օգտվելու իրավունք ունի:

2. Ավանդապես կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված վայրերում, եթե այդ անձինք խնդրել են, և այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը համապատասխանում է իրական կարիքներին, Կողմերը, որքանով հնարավոր է, պետք է ձգտեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անձանց և վարչական իշխանությունների միջև հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն:

3. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ ամենասեղմ ժամկետներում իրեն հասկանալի լեզվով տեղեկություն ստանալ իր ձերբակալության պատճառների, իր դեմ հարուցված մեղադրանքների բնույթի և պատճառների մասին, ինչպես նաև իր պաշտպանությունը իրականացնել այդ լեզվով՝ դրա համար անհրաժեշտության դեպքում ստանալով թարգմանչի անվճար ծառայություն:

95. 2015 թվականի ՀՀ սահմանադրական բարեփոխումների արդյունքում ևս մեկ անգամ շեշտադրվեց, որ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք, ի թիվս այլնի, ունեն իրենց լեզվի պահպանման ու զարգացման իրավունք:

96. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի սահմանում է, որ ՀՀ-ում քրեական դատավարության լեզուն հայերեն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովվում են հայերեն թարգմանությունը: ՀՀ քրեական դատավարության 15-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական դատավարության մասնակցին (բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի) նրա նախաձեռնությամբ նշանակված փորձագետին, նրա միջնորդությամբ հրավիրված մասնագետին կամ վկային դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե համապատասխան անձը չի տիրապետում հայերենին, և անձն ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար, իսկ 4-րդ մասը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձինք (բացառությամբ վկայի) դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը քրեական վարույթն իրականացնող մարմինը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ նշված օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

97. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասով սահմանվում է, որ ՀՀ տարածքում, անկախ հանցանքի կատարման վայրից, քրեական գործերով վարույթ իրականացվում է նշված օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ: Հետևաբար, նույնիսկ դատավարության լեզվին՝ հայերենին, տիրապետող ազգային փոքրամասնությանը պատկանող

անձին՝ իր ցանկությամբ, հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճենները կարող են տրամադրվել համապատասխան լեզվով, քանի որ տվյալ պարագայում անհրաժեշտ կլինի ղեկավարվել Խարտիայի պահանջներով: Ելնելով այս սկզբունքից՝ գտնում ենք, որ դատավարության լեզվին տիրապետող ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք նույնպես կարող են պահանջել, որ հանձնման ենթակա փաստաթղթերն իրենց տրամադրվեն համապատասխան լեզվով վավերացված պատճեններով:

98. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության լեզուն հայերեն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն գործին մասնակցող անձինք դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը դատարանը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ նշված օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց: Նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, թե ապահովում են հայերեն թարգմանությունը: Թարգմանչի ծառայությունները ապահովվում են պետական միջոցների հաշվին, եթե համապատասխան անձը չի տիրապետում հայերենին, և գործին մասնակցող անձն ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

99. Նշված իրավունքի իրականացումը կարգավորվում է նաև «Լեզվի մասին» օրենքով և «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծով: «Լեզվի մասին» օրենքում 2018 թվականի մարտի 23-ին կատարած լրացման արդյունքում Լեզվի կոմիտեն ապահովում է ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը:

Հոդված 11

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ ունի իր անունը, ազգանունը և հայրանունը փոքրամասնության լեզվով օգտագործելու, ինչպես նաև դրանց պաշտոնական ճանաչման իրավունք՝ տվյալ երկրի իրավական պահանջներին համապատասխան:
2. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ իր փոքրամասնության լեզվով հասարակության համար տեսանելի մասնավոր բնույթի նշումներ, գրություններ և այլ տեղեկատվություն տեղադրելու իրավունք ունի:
3. Ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդաբար բնակեցված տարածքներում Կողմերը իրենց իրավական համակարգերի շրջանակներում, անհրաժեշտության դեպքում ներառյալ նաև այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերը, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա:

100. «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծով նախատեսվում է, որ հնարավորություն կընձեռնվի նաև այն համայնքներում, որտեղ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք կազմում են ընդհանուր բնակչության առնվազն երեսուն տոկոսը, համայնքների և փողոցների անվանումները, ինչպես նաև պետական և համայնքային հաստատությունների՝ այդ թվում համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի ցուցատախտակների գրառումները հայերենի հետ զուգահեռ նշվում են նաև ազգային փոքրամասնության լեզվով:

101. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ի մասի 23-րդ կետի համաձայն՝ ավագանին որոշում է ընդունում փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների անվանումների վերաբերյալ:

102. Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքում դպրոցի դասարաններից մեկը անվանակոչվել է 2016 թվականի ապրիլյան քառօյա պատերազմի հերոս Քյարամ Սլոյանի անունով, որտեղ սովորել է վերջինս:

103. Արմավիրի մարզի Ֆերիկի հիմնական դպրոցը անվանակոչվել է ազգությամբ եզդի նախկին տնօրեն, գրող Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անունով:

104. Լոռու մարզի Ֆիոլետովո, Լերմոնտովո, Պրիվոլնոյե համայնքներում բնակավայրերի անվանումների ցուցանակները գրված են և հայերեն, և ռուսերեն լեզուներով: Կողես և Յաղդան համայնքներում հույների մեծ մասը հեռացել են, մնացել են այն հույները, որոնք ամուսնացել են հայերի հետ և բավարար տիրապետում են հայերենին: Համայնքի ղեկավարին առաջարկվել է տեղադրել նաև հունարեն լեզվով ցուցանակներ, սակայն վերջինս, հաշվի առնելով վերոգրյալը, դրա անհրաժեշտությունը չի տեսնում: Դրա անհրաժեշտությունը չեն տեսնում նաև Արագածոտնի մարզի եզդիաբնակ համայնքների ղեկավարները՝ չնայած Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի բազմակի առաջարկներին:

105. Կոտայքի մարզի Զովունի, Նոր Գեղի, Արզնի, Քանաքեռավան բնակավայրերի մուտքերի մոտ ազգային փոքրամասնությունների լեզուներով տեղադրվել են տեղագրական ցուցանակներ:

Հոդված 12 - 14

Հոդված 12

1. Կողմերը անհրաժեշտության դեպքում կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար:

2. Այս ենթադրաբարում Կողմերը, մասնավորապես, պետք է համարժեք հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:

3. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար բոլոր մակարդակներով ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ:

Հոդված 13

1. Իրենց կրթական համակարգերի շրջանակներում Կողմերը պետք է ճանաչեն, որ ազգային փոքրամասնության պատկանող անձինք իրավունք ունեն ստեղծելու և ղեկավարելու իրենց սեփական մասնավոր կրթական - վերապատրաստման հաստատությունները:

2. Այս իրավունքի իրագործումը Կողմերի վրա ոչ մի ֆինանսական պարտավորություն չի դնում:

Հոդված 14

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն:

2. Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում բավարար կարիքի դեպքում Կողմերը հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում պետք է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորեն իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու համարժեք հնարավորություններ:

3. Սույն հոդվածի 2-րդ պարբերության դրույթները չպետք է իրագործվեն ի վնաս պաշտոնական լեզվի ուսուցման և դասավանդման:

106. Ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն աջակցելու նպատակով ուսումնական ծրագրերից, դասագրքերի հրատարակումից, մանկավարժական կադրեր պատրաստելուց բացի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական միջոցներ են հատկացվում նաև էթնիկ համայնքների հասարակական կազմակերպություններին՝ նրանց կողմից հրատարակվող պարբերական մամուլի տպագրման գործընթացը խրախուսելու համար: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը աջակցություն է ցուցաբերում ազգային 11 փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող 13 մամուլի և 1 ամսագրի հրատարակմանը:

107. Ազգային փոքրամասնությունների կողմից վերջին 5 տարվա ընթացքում ակտիվ իրականացվում է գրահրատարակչություն: 2015 թ. հրատարակվել են քուրդ հրապարակախոս Ամարիկե Սարդարի «Կարոտ» վեպը քրդերեն լեզվով, ռուս հեղինակ Ալեքսանդր Պորյադոզնիի «Արծաթե թելը» վեպը թարգմանվել է ռուսերենից-հայերեն: 2016 թ. հրատարակվել է Մոազե Ջամալի «Լեռների ծիածանը» պատմվածքների ժողովածուն (եզդիերեն) և հույն հեղինակ Ն. Նիկոլաիդի և Ա. Խուրշուդյանի «Սակկիլարի» գիրքը: 2017 թվականին՝ հրատարակվել է եզդի հեղինակ Ամո Շառոյանի «Շանգալի ցավը» արձակ ժողովածուն և Ալիխանե Մամեի քրդերեն «Բանաստեղծություններ»-ը:

108. Գրավոր խոսքի մեջ ազգային փոքրամասնությունների լեզուների գործածման հեշտացումն ապահովելու համար համապատասխան լեզուներով կազմակերպվում են տարբեր միջոցառումներ: Հայ-խորայելական մշակութային հարաբերությունների ամրապնդման, ինչպես նաև Հայաստանում ազգային փոքրամասնությունների մշակույթի տարածմանն ու

պահպանմանը նպաստելու նպատակով 2017թ. «Հայաստանի պետական ֆիլիարմոնիա» ՊՈԱԿ-ում իրականացվել են՝ Հայաստանում հրեական «Մագեն Դավիթ» թերթի լույսընծայման 30-ամյակին նվիրված ծրագրը և Հայաստանում «Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ-ի, «Դնիպրո» համույթի ստեղծման, «Դնիպրո-Սլավուտիչ» թերթի լույսընծայման 20-ամյակին նվիրված միջոցառումները:

109. Բացի այդ, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել ինչպես եզդի ուսանողների ուսման, այնպես էլ եզդիական համայնքը ներկայացնող երիտասարդական կազմակերպությունների կողմից առաջարկված մշակութային ծրագրերի իրականացման համար: Հավելված 4-ում ներկայացված է տեղեկատվություն՝ 2018 թվականի դրությամբ ՀՀ բուհերում սովորող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների վերաբերյալ:

110. Հետբուհական կրթական ծրագրով սովորում են ազգային փոքրամասնությունների 4 ներկայացուցիչներ, նրանցից 3-ը (ասորական, եզդիական և ուկրաինական համայնքներից) սովորում են Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, եզդիական համայնքի ևս մեկ ներկայացուցիչ սովորում է ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում:

111. 2017-2018 ուսումնական տարվա հունիսին Երևանի պետական հումանիտար քոլեջի մի խումբ ուսանողների արտադրական պրակտիկան կազմակերպվել է Գերմանիայում: Արդեն երրորդ տարին է, ինչ Երևանի պետական հումանիտար քոլեջում դասավանդվում է խորացված գերմաներեն: Քոլեջը պաշտոնապես միացել է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության մասնագիտական կրթության ծրագրին (DSD): Լինելով այս ծրագրին միացած առաջին ՄԿՈՒ հաստատությունը՝ ԵՊՀ-ն հաջողությամբ իրականացնում է այն: Ստանալով գերմաներենի խորացված գիտելիք (B1 մակարդակ)՝ քոլեջի ուսանողները, առանց իմացության հավելյալ ստուգումների, կարող են կրթությունը շարունակել Գերմանիայի միջին մասնագիտական, առանձին դեպքերում նաև բարձրագույն կրթության ոլորտում: Քոլեջում դասավանդվում են նաև գերմանացի մասնագետների կողմից: Տեղի են ունենում բազմաբնույթ միջոցառումներ:

112. Արագածոտնի մարզում 2016թ. վերահրատարակվել է «Եզդիերեն» 1-12-րդ դասագրքերը, իսկ 2015թ.՝ «Քրդերեն»՝ 7-րդ, 8-րդ, 9-րդ դասարանի դասագրքերը: Արարատի մարզում 100-ական օրինակով դպրոցներին են տրամադրվել «Եզդիերեն այբբենարան», 5-11-րդ դասարանների «Եզդիերեն լեզու» և «Եզդիերեն գրականություն», 10-11-րդ դասարանների «Եզդիերեն» դասագրքեր: Արմավիրի մարզում, համագործակցելով Հայաստանի փոքրամասնությունների ազգային կառույցների հետ, ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների համար կազմակերպվում է ազգային լեզվի ուսուցում մարզի այն համայնքների հանրակրթական դպրոցներում, որտեղ կան ազգային փոքրամասնությունների համայնքներ: Մարզի 21 դպրոցներում ուսուցանվում է եզդիերեն, ևս մեկ դպրոցում՝ ասորերեն: Դասընթացներում ընդհանուր թվով ներգրավված են 1133 երեխաներ, բոլոր աշակերտներն ապահովված են դասագրքերով: Շիրակի մարզի Ազատան համայնքում բնակվող ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդի երեխաների համար համայնքի միջնակարգ դպրոցում ուսուցանվում է եզդիերեն: Դասավանդող ուսուցիչն աշխատում է շաբաթական 6 դասաժամ ծանրաբեռնվածությամբ և վարձատրվում սահմանված դրույքաչափով: Ուսուցումն

իրականացվում է եզրփերեն դասագրքերով, որոնք թարմացվել և վերահրատարակվել են 2018 թվականին՝ «Կրության և գիտության նախարարության պատվերով» «Հյուսիսային մարզերի եզրփերեն միավորում» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ:

113. Երևանի քաղաքապետարանի Ա. Պուշկինի անվան հ. 8 հիմնական դպրոցում 1998թ.-ից դպրոցի ռուսերենով ուսուցմամբ դասարաններում ուսումնական պլանով նախատեսված դասավանդվում են «Ասորերեն» և «Ասորական գրականություն» առարկաները: Ասորական համայնքի ջանքերով մշակվել և տպագրվել են դասագրքեր, որոնցով իրականացվում է ուսուցումը: Ուսուցիչներն ազգությամբ ասորի են, ինչը ևս նպաստավոր պայմաններ է ստեղծում աշակերտներին ասորական մշակույթին, ավանդույթներին և ազգային այլ առանձնահատկություններին հաղորդակից դարձնելու գործում: Դասերի ընթացքում ուսուցիչներն այլընտրանքային կարգով կիրառում են նաև ասորական պատմության դասագրքեր, ասորի հեղինակների կողմից ստեղծված գեղարվեստական գրականություն: Յուրաքանչյուր տարի առարկայի ուսումնասիրության մեջ ներգրավված աշակերտների քանակը 250-ից 300 է: Առարկաների դասավանդումը հնարավորինս զուգորդվում է ասորական պոեզիայի և երգերի ուսուցանմամբ, ինչն առավել հետաքրքիր և բովանդակային է դարձնում դասաժամերը: Կազմակերպվում են նաև բաց դասեր, բեմականացված ներկայացումներ, ցուցահանդեսներ և արտադասարանական այլ միջոցառումներ: Յուրաքանչյուր տարի 7-րդ դասարանի աշակերտները կազմակերպում են դաս-զեկույց ասորի ազգության պատմության մասին, իսկ 8-րդ դասարանիցները՝ ասորական մշակույթի, հագուստի, կենցաղի և այլ ավանդույթների մասին: Հաճախակի դպրոցը հյուրընկալում է ասորական համայնքի տարբեր երկրներից ներկայացուցիչների, որոնք մասնակցում են բաց դասերին և այլ միջոցառումներին:

114. Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական դպրոցների ուսումնական պլանով 2-9-րդ դասարաններում «Ռուսաց լեզու» առարկան ընդգրկված է պետական բաղադրիչի ուսումնական առարկաների ցանկում: Ուսուցումն իրականացվում է Հայաստանում հրատարակված դասագրքերով, որտեղ հաշվի են առնվել ազգային դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հանրապետության մի շարք դպրոցներում 1999 թվականին բացվել են ռուսերենի խորացված ուսուցմամբ դասարաններ: Ներկա դրությամբ Երևանում գործում է քաղաքապետարանի ենթակայության ռուսերենով խորացված 30 դպրոց: Այդ դպրոցներին տրամադրվել են հատուկ ծրագիր, դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ: 2019 թվականի դրությամբ Երևանի քաղաքապետարանի թվով 13 դպրոցում առկա են ռուսերենով ուսուցմամբ դասարաններ, որտեղ սովորում է շուրջ 2987 ազգությամբ ռուս աշակերտ: Այդ դպրոցներին տրամադրվել են համապատասխան դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ:

115. «Ասորերենի, քրդերենի և եզրփերենի հրատարակված դասագրքերի և առարկայական ծրագրերի էլեկտրոնային տարբերակները* տեղադրվել են ՀԿՑ-ի կենտրոնական հանգույցում գործող «Հայկական կրթական միջավայր» պորտալի (<http://www.armedu.am>) «Պաշարների շտեմարան» ենթակայքում (<http://lib.armedu.am>)»⁴:

⁴ ՀՀ 4-րդ զեկույցից հետո տեղադրված էլեկտրոնային պաշարները. **Եզրփերենի** 12 դասագիրք (1-12 դաս.) (2015-2018թթ. հրատարակված) (http://lib.armedu.am/category/221/date_created/desc), **ասորերենի չափորոշիչ և ծրագիր** (<https://lib.armedu.am/resource/27242>), ասորերեն լեզվի և գրականության ուսումնական պլան (<https://lib.armedu.am/resource/27243>):

116. Հայաստանի մի շարք գյուղական համայնքների դպրոցական շենքերում ստեղծվել են նախադպրոցական կրթության օջախներ, որտեղ օրվա առաջին կեսին գործում են դասարաններ ազգային փոքրամասնությունների 4-5 տարեկան երեխաների համար: Այդպիսի նախակրթարաններ գործում են Հայաստանի Հանրապետության Շիրակի, Արագածոտնի, Արմավիր և Արարատի մարզերի մի շարք հանրակրթական դպրոցներում:

Հոդված 15

Կողմերը պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային, հասարակական և տնտեսական կյանքում, ինչպես նաև պետական գործունեության մեջ, մասնավորապես, իրենց առնչվող հարցերում ապահովելու համար:

117. Հայաստանում մշակութային բազմազանություն ապահովող ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացումը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է: Ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ ապահովելու ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային կյանքին, ինչպես նաև երիտասարդ սերնդին երիտասարդական ոլորտի ծրագրերում ներգրավվելու համար:

118. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ին ընդունված ընտրական օրենսգրքը սահմանդրական օրենքի 83-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ համապետական ընտրական ցուցակը կարող է ունենալ երկրորդ մաս, որում, սույն հոդվածի 6-րդ մասին համապատասխան, կարող են ընդգրկվել ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Համապետական ընտրական ցուցակի երկրորդ մասում ընդգրկված ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորի թեկնածուն կարող է ընդգրկվել նաև համապետական ընտրական ցուցակի առաջին մասում: Երկրորդ հերթին, մանդատների՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին տրամադրման կարգը նկարագրված է օրենսգրքի 95-րդ հոդվածի 9-րդ մասում:

119. ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին մշակույթի տարբեր ոլորտներում ընդգրկվելու և նրանց մասնակցությունը ապահովելու նպատակով կազմակերպվել են նրանց ազգագրությունն ու ժամանակակից արվեստը ներկայացնող ցուցահանդեսներ, համերգներ, փառատոներ՝

2015 թվականին աջակցություն է ցուցաբերվել.

- «Եզդիների ազգային միություն» ՀԿ-ին՝ ՀՀ մարզերում եզդիական մշակութային, կրթական, տոնական ավանդական միջոցառումների կազմակերպման համար, ինչպես նաև «Մատիտով» մանկապատանեկան նկարչական ցուցահանդեսին: «Միջէթնիկ և միջմշակութային համագործակցությունների կենտրոն» մարդասիրական ՀԿ-ին՝ «Նարեկացի»

արվեստի միությունում եզդիների ցեղասպանության դատապարտմանը նվիրված լուսանկարչական ցուցահանդեսի անցկացմանը,

- ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհրդին՝ «Հայաստանի ազգային փոքրամասնություններն ընդդեմ ցեղասպանությունների» խորագրով Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառման կազմակերպմանը,

- Հույների ցեղասպանության մասին «Արգոնավորդների հետքերով» վավերագրական ֆիլմի հայերեն թարգմանությանը («Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնք» ՀԿ),

- «Մինորա» հրեական մշակութային կենտրոն ՀԿ-ին՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Վիլլի Վայների 60-րդ տարեդարձին նվիրված հոբելյանական երեկոյի կազմակերպմանը:

- Հայաստանում ու արտերկրում ռուսալեզու հանրության համար հրատարակվող «Համբերություն քեզ մարդ» գիրք-ժողովածուի (ռուսերեն լեզվով) հրատարակմանը:

2016 թվականին թվականին աջակցություն է ցուցաբերվել՝

- «Եզդիների ազգային միություն» ՀԿ-ին՝ եզդիական մշակութային, կրթական, տոնական ավանդական միջոցառումների կազմակերպմանը.

- «Սինջար. եզդիների ազգային միավորում» ՀԿ-ին՝ եզդիների Նոր տարվա տոնակատարության կազմակերպմանը.

- «Հունաստանի Հանրապետությունում «Grape festival «The harvest by the centuries, Stimaga» միջազգային ժողովրդական պարի փառատոնին «Խարիտոնի» հունական համույթի մասնակցությանը.

- «Մենորա» հրեական մշակութային կենտրոնին՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, երաժիշտ-կոմպոզիտոր Վիլյամ Վայների երգչախմբային ստեղծագործությունների «Willy Weiner & Friends» ձայնասկավառակի ձայնագրմանն ու հրատարակմանը.

2017 թվականին աջակցություն է ցուցաբերվել՝

- «Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ-ին՝ եզդիների «Խըդր Նավի» տոնակատարության կազմակերպմանը.

- «Եզդիների ազգային միություն» ՀԿ-ին՝ Ջովունիում և Եղվարդում ավանդական եզդիական տոներին («Չարշամա սարե սալե» եզդիների նոր տարի, «Չլե հավինե» տոն) նվիրված միջոցառումների կազմակերպմանը.

- «Ներկա» կրթամշակութային ՀԿ-ին՝ Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մշակույթի տարածմանը, ավանդույթների պահպանմանն ու զարգացմանն ուղղված ազգային փոքրամասնությունների մշակութային փառատոնի կազմակերպմանը.

2018 թվականին աջակցություն է ցուցաբերվել՝

- «Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ-ին՝ եզդիական մշակութային, կրթական, տոնական ավանդական միջոցառումների կազմակերպմանը.

- «Եզդիների ազգային միություն» ՀԿ-ին՝ հայաստանաբնակ եզդիների կենցաղը, մշակույթը, ստեղծագործական կյանքը լուսաբանող «Էզդիխանա» թերթի գործունեությանը.

- «Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ-ին՝ «Քուրդ ժողովրդի համերաշխության օրվա» կապակցությամբ մշակութային միջոցառումների համալիր ծրագրի իրականացմանը.

- Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության տարեկան և միջնաժամկետ ծախսային ծրագրերում «Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը» ծրագրի «Աջակցություն ազգային փոքրամասնությունների մշակույթին» ենթածրագրով ամեն տարի նախատեսվել են բյուջետային հատկացումներ՝ Հայաստանի

Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակութային միջոցառումներին աջակցելու նպատակով: Մասնավորապես վերոնշյալ ենթաձրագրով 2015 թ.՝ 14077.0.0 հազ. դրամ, 2016 թ.՝ 14797.0. հազ. դրամ, 2017 թ. 14432.0 հազ. դրամ, 2018 թ.՝ 9425.0 հազ. դրամ: Հատկացվող գումարների փոքր-ինչ նվազումը պայմանավորված է երկրում առկա տնտեսական դժվարություններով: 2019 թ. «Աջակցություն ազգային փոքրամասնություններին» ծրագրով դրամաշնորհ մրցութային միջոցառումներին հատկացվել է 15000.0 հազ. դրամ:

120. Երկարամյա բարեխիղճ, արդյունավետ աշխատանքի համար և Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի առթիվ ՀՀ Նախագահի 2016 թ. հրամանագրով Երախտագիտության մեդալով պարգևատրվել են.

- Հայաստանի Հանրապետության կոմպոզիտորների միության անդամ երաժշտագետ, լրագրող Զամիլա Զամիլ Զասիմը՝ քրդական համայնք.
- Դուդուկագործ, դուդուկահար Միխայիլ Սադունը՝ ասորական համայնք.

Հոդված 16

Կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով, և նպաստակ ունեն սահմանափակելու սույն Շրջանակային կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքներն ու ազատությունները:

121. 2015 թվականի դեկտեմբերի 8-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ, 6-րդ հոդվածները, 7-րդ հոդվածի 2-րդ և 10-րդ հոդվածի 3-րդ կետերը: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է Խարտիայի բոլոր դրույթների կիրառումը:

122. 2016 թվականին մեկնարկել են վարչատարածքային բարեփոխումները: Համայնքների միավորման գործընթացում ներգրավվել է թվով 465 համայնք, ինչի արդյունքում ձևավորվել է թվով 52 համայնք: Միավորման գործընթացում չընդգրկված համայնքների թիվն է 450: Համայնքների ընդհանուր թիվն է 502 (գործընթացի մեկնարկին՝ 915): Համայնքների միավորման գործընթացն իրականացնելիս ՀՀ կառավարությունը մշտապես ձեռնպահ է մնացել համայնքների այնպիսի միավորումներ ձևավորումից, ինչի արդյունքում կփոփոխվեր բնակչության կառուցվածքային կազմն այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով:

123. Այսպես, ՀՀ Արագածոտնի մարզում ազգությամբ եզդի բնակիչներով խիտ բնակեցված թվով 11 համայնք միավորվեցին, ստեղծելով Ալագյազ համայնքը: ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքը, որտեղ կոմպակտ բնակվում են ազգությամբ ասորի բնակիչներ, չմիավորվեց որևէ այլ համայնքի հետ, քանի որ վերջինիս հարևարությամբ առկա են միայն հայաբնակ համայնքներ, և միավորելով այդ համայնքների հետ՝ կփոփոխվեր նորաստեղծ համայնքում

ասորի բնակչության կառուցվածքը: Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումները նախատեսվում է շարունակել 2019-2020 թվականներին: այդ ընթացքում Կառավարությունը հավատարիմ է մնալու ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով բնակեցված համայնքների նկատմամբ մինչ այժմ որդեգրած քաղաքականությանը:

124. 2017 թվականի ՀՀ կառավարության որոշմամբ համայնքների խոշորացման ծրագրի շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի տարածաշրջանում ձևավորվել է ազգային փոքրամասնությունների մեկ խոշորացված համայնք /Ալագյազ/, որի կազմի մեջ ընդգրկվել են Ալագյազ, Ավշեն, Սադունց, Ճարճակիս, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Ռյա-Թազա, Կանիաշիր, Սիփան և Միջնատուն բնակավայրերը:

Հոդված 17-18

Հոդված 17

1. Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնություններին պարկանող անձանց իրավունքը՝ հաստատել և պահպանել ազատ և խաղաղ միջսահմանային շփումներ այլ պետություններում օրինական կերպով գտնվող անձանց հետ, մասնավորապես, նրանց հետ, ովքեր ունեն ընդհանուր էթնիկական ինքնություն, լեզվական, կրոնական կամ մշակութային ընդհանուր ժառանգություն:
2. Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնություններին պարկանող անձանց ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանը ազգային և միջազգային մակարդակներով մասնակցելու իրավունքը:

Հոդված 18

1. Համապատասխան ազգային փոքրամասնություններին պարկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է ջանք գործադրեն այլ պետությունների, մասնավորապես, հարևան երկրների հետ երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կնքելու համար:
2. Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է միջոցներ ձեռնարկեն միջսահմանային համագործակցությունը խրախուսելու համար:

125. Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է ազգային փոքրամասնությունների համագործակցությունը **մայր երկրների** հետ: Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակույթները հնարավորության սահմաններում ներկայացվում են նաև արտերկրում: Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները յուրաքանչյուր տարի մասնակցում են միջազգային համագումարներին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին:

126. 2016 թ. Հայաստանում Հունական համայնքի «Խարիտոնի» անսամբլը Հունաստանում մասնակցել է «Grape festival «The harvest by the centuries, Stimaga» միջազգային ժողովրդական պարի փառատոնին: Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ ստանձնած պարտավորությունը ասորերենի, հունարենի, քրդերենի և եզդիերենի վերաբերմամբ իրականացնելու համար, սակայն ֆինանսական միջոցների սղությունը դժվարացնում է սույն պարտավորության իրականացումը:

127. Հայաստանի երկու սահմանակից պետությունների Վրաստանի և Իրանի պարագայում շփումներն իրականացվում են ազատ և անկաշկանդ, ինչպես դա եղել է նաև նախկինում: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այս երկրում բնակվող փոքրամասնությունների հետ անմիջական շփումներն անհնարին են դարձել սկսած 1988 թվականից, երբ ադրբեջանական իշխանությունների վարած էթնիկ զտումների քաղաքականությունը վերաճեց Լեռնային Ղարաբաղի դեմ բացահայտ ագրեսիայի և լայնածավալ ռազմական գործողությունների, ինչի հետևանքով ոչ միայն մինչ օրս փակ է մնում այս երկրի հետ սահմանը, այլև Ադրբեջանի կողմից պետական մակարդակով իրականացվում է այլաոյացության և ռասիզմի լայնածավալ քարոզչություն, ինչն առաջին հերթին ազդում է փոքրամասնությունների վրա և անկասկած չի նպաստում ԼՂ հակամարտության լուծմանը:

128. Հայաստանի Հանրապետությունն աջակցում է տարբեր երկրների միջև հասարակական կազմակերպությունների շփումներին, որպես վստահության ամրապնդման կարևոր միջոց, մինչդեռ Ադրբեջանը հետապնդում է այն բոլոր ՀԿ-ներին, որոնք ցանկանում են համագործակցել հայկական կազմակերպությունների հետ:

129. Հայաստանը տարբեր միջազգային կազմակերպությունների, ներառյալ ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի ուշադրությունն է հրավիրել սահմանագծի մոտակա բնակավայրերի ուղղությամբ Ադրբեջանի կողմից պարբերաբար արձագվող կրակոցների վրա, ինչպես նաև 2016 թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի (Արցախի) դեմ Ադրբեջանի սանձազերծած լայնամասշտաբ ռազմական գործողությունների ընթացքում քաղաքացիական անձանց թիրախավորելու փաստի վրա: Ադրբեջանական ագրեսիան ուղեկցվում էր միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ խախտումներով, մասնավորապես, կանանց և տարեցների խոշտանգումների դեպքերով (վերը նշվածի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար տես Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը, որը տարածվել էր որպես պաշտոնական փաստաթուղթ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանի ժամանակ (<http://undocs.org/A/70/863>):

Ադրբեջանական ապրիլյան վայրագությունների արդյունքում ավելի քան 2000 անձ լքել է Լեռնային Ղարաբաղի Թալիշի, Մարտակերտի, Մարտունու և Հադրութի գյուղերը և տեղափոխվել Հայաստան:

130. Առանձնակի դաժանության և Միջազգային մարդասիրական իրավունքի խախտման դեպքերից մեկը եղել է ադրբեջանական զինված ուժերի կողմից «խլամական պետության» ոճով գլխատված և հետագայում քաղաքներում ու գյուղերում հանրայնացված և սոցիալական ցանցերում հրապարակայնացված ՀՀ քաղաքացի ազգությամբ եզդի Քյարամ Քալաշի Սլոյանի գործը:

Հոդված 19

Կողմերը պարտավորվում են հարգել և կիրառել սույն Շրջանակային կոնվենցիայի սկզբունքները անհրաժեշտության դեպքում կատարելով միայն այնպիսի սահմանափակումներ և բացառություններ, որոնք նախատեսված են միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայում, այնքանով,

որքանով դրանք վերաբերում են նշված սկզբունքներից բխող հրավումքներին ազատություններին:

131. «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը միտված է 28.01.1951թ. «Փախստականների կարգավիճակի մասին» Կոնվենցիայի պահանջներին ՀՀ օրենսդրության համապատասխանեցմանը, ներկայացվել է 6-րդ գումարման ՀՀ ԱԺ, սակայն նախագծի քննարկումը հետաձգվել է: